



Implemented by
giz
German Technical Cooperation GmbH

ECOserve «Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար» ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿԿ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վահագն Պետրոսյան
Հունվար, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	3
1. ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ.....	4
1.1. Արոտների կայուն կառավարման հետ կապված համալիր իրավահարաբերությունները սահմանող իրավական ակտերի իրավակարգավորման առարկան.....	4
1.2. Արոտների կայուն կառավարման հետ կապված իրավահարաբերությունները և ընթացակարգերը սահմանող հիմնական իրավական ակտերի իրավակարգավորման առարկան.....	22
1.3. Աղյուսակ 1. Արոտների կառավարմանը վերաբերող հիմնական օրենսդրական կարգավորումները, արոտների կառավարման պլանավորման կառուցակարգերը և ՏԻՄ-երի որոշումների շրջանակը.....	29
1.4. Արոտների կայուն կառավարման գործընթացներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և որոշումների կայացման շրջանակը.....	34
1.5. Աղյուսակ 2. Արոտների կառավարման գործընթացներում բնակչության մասնակցությունը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների վերաբերյալ հանրային քննարկումները և իրազեկումը.....	40
1.6. Արոտների կայուն կառավարման գործընթացների իրականացման նկատմամբ վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները.....	51
1.7. Աղյուսակ 3. Արոտների կայուն կառավարման գործընթացների իրականացման նկատմամբ վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները.....	60
1.8. Արոտագտագործողների կոոպերատիվները և դրանց գործունեությունը կարգավորող ինստիտուցիոնալ կառուցակարգերը.....	64
1.9. Արոտների կայուն կառավարման գործընթացների կազմակերպմանը և իրականացմանը աջակցելու նպատակով մշակված ուղեցույցները.....	66
2. Եզրահանգումներ և ամփոփում.....	70
2.1. Արոտների կայուն կառավարման բնագավառում առկա օրենսդրական խնդիրներից բխող առաջարկությունները.....	73
2.2. Աղյուսակ 4. Հայաստանում արոտների կառավարմանն առնչվող ինստիտուցիոնալ կարգավորումների ամփոփ նկարագիրը.....	78

ՆԱԽԱԲԱՆ

Արոտների կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի նկարագրությունը՝ համարվում է իրավական-վերլուծական փաստաթուղթ, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության արոտների կայուն կառավարման գործող օրենսդրական կարգավորումները, այդ կարգավորումներից բխող ներկայացվում են արոտների կայուն կառավարման գործընթացներում ներգրավված մարմինները, դրանց վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակը, գործընթացի կազմակերպման և իրականացման նկատմամբ վերահսկողության գործիքակազմերը և այլն:

Սույն հետազոտությունը նպատակ ունի, Հայաստանի Հանրապետության արոտների կայուն կառավարման հետ կապված իրավահարաբերությունները սահմանող օրենսդրության ուսումնասիրման համատեքստում ոչ միայն կանոնակարգված ներկայացնել արոտների կառավարման գործընթացներում հիմնական դերակատարների լիազորությունների և դրանցից բխող որոշումների կայացման շրջանակը, այլև բացահայտել և վեր հանել այս ոլորտում առկա օրենսդրական և իրավակիրառական բնույթի խնդիրներն, բացերն ու հակասությունները:

Արոտների կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի նկարագրության կազմման հիմքում ընկած են Հայաստանի Հանրապետության հողային, քաղաքացիական և տեղական ինքնակառավարման ոլորտների իրավահարաբերությունները սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

Արոտների կայուն կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի նկարագրությունը նպատակ ունի մեկտեղելու և կանոնակարգված ներկայացնելու այն հիմնական և ոլորտային օրենսդրական կարգավորումները, որով հնարավորություն կընձեռվի մեկ փաստաթղթի ուսումնասիրման շրջանակում իրազեկ լինելու այս բնագավառին վերաբերող գործընթացների դերակատարների, նրանց վերապահված լիազորությունների, ընդունվող որոշումների շրջանակի և այլնի մասին:

Ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնական կերհանդակների կառավարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված չեն մեկ հիմնական օրենսդրական ակտով, այլև սահմանված են տարբեր օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, ինչը իր հերթին թե՛ ոլորտի

կանոնակարգման, թե՛ ինստիտուցիոնալ կառուցակարգերի կիրարկման տեսանկյունից խնդրահարույց արդյունքների է հանգեցնում: Հարկ է նկատել, որ ի թիվս Հայաստանի Հանրապետության բազմաթիվ այլ ոլորտային համակարգերի (ենթահամակարգերի) արոտների կայուն կառավարման գործընթացները ևս անմասն չեն մնացել հստակ և համալիր օրենսդրական կարգավորումներ չունենալու հնարավորությունից:

**1. ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

**1.1. Արոտների կայուն կառավարման հետ կապված համալիր
իրավահարաբերությունները սահմանող իրավական
իրավակարգավորման առարկան**

Արոտների կառավարման հետ կապված Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ սահմանված իրավահարակարգավորումները վերլուծելիս, առաջին հերթին անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել ՀՀ Սահմանադրությունը: ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված չեն ուղղակի և անուղղակի կարգավորումներ, որոնք վերաբերելի են արոտների կառավարման իրավահարաբերություններին: ՀՀ Սահմանադրությունը այս համատեքստում կարգավորումներ է նախատեսել հողերի սեփականության հետ կապված իրավահարաբերությունների մասով և մասնավորապես՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի մասով (Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդվ.184):

Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերությունները կարելի է որակել որպես հողային իրավահարաբերություններ, իսկ իրավաբանական ընդհանուր համատեքստում՝ քաղաքացիական իրավահարաբերություններ: Բնական կերհանդակների՝ այդ թվում արոտների կառավարումը բավականին ընդգրկուն հարաբերությունների համակցություն է, որն իր հերթին հնարավորություն չի ընձեռում այն որակելու կամ սահմանելու, որպես կոնկրետ ոլորտի իրավահարաբերություն: Անշուշտ, որպես բնագավառ, այն կարող է դիտարկվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և հողային քաղաքականությունների մի բաղադրիչ, սակայն երբ անդրադարձ է կատարվում արոտների կառավարման գործընթացներին, ապա այն անմիջականորեն աղերսվում է տեղական

ինքնակառավարման համակարգին՝ մասը կազմելով տեղական ինքնակառավարմանը բնորոշ իրավահարաբերություններին:

Այսպես՝ բնական կերհանդակների կառավարումը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

- ⇒ Օրենսդրական ակտեր, որոնք ընդունված են առավելապես կամ բացառապես արոտների կառավարման հետ կապված հարաբերությունները սահմանելու նպատակով.
- ⇒ Օրենսդրական ակտեր, որոնք ընդունված են համալիր իրավահարաբերություններ կանոնակարգելու նպատակով և իրենց կարգավորման առարկայի շրջանակում նաև ներառում են արոտների կառավարմանը վերաբերող իրավակարգավորումներ:

Առաջին խմբին պատկանող օրենսդրական ակտերը Հայաստանի Հանրապետությունում շատ չեն, դրանք թվով երկուսն են և ունեն ոչ թե օրենքի, այլև ենթաօրենսդրական ակտի կարգավիճակ: Այդ ենթաօրենսդրական ակտերն են.

- ✓ «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումը.
- ✓ «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը:

Երկրորդ խմբին պատկանող օրենսդրական ակտերը բազմաթիվ են, որոնք կարգավորում են համալիր իրավահարաբերություններ, այդ թվում՝ արոտների կառավարմանը վերաբերող իրավակարգավորումներ: Այս խմբի օրենսդրական ակտերն են՝

- ✓ ՀՀ հողային օրենսգիրքը.
- ✓ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը.
- ✓ ՀՀ անտառային օրենսգիրքը.
- ✓ ՀՀ ջրային օրենսգիրքը.
- ✓ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը.
- ✓ ՀՀ հարկային օրենսգիրքը.

- ✓ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը.
- ✓ «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումը.
- ✓ «Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N 431-Ն որոշումը.
- ✓ «Ջրային համակարգերը ոռոգման, արոտավայրերի ջրարբիացման, հողերի լվացման ու աղազերծման և գյուղատնտեսական այլ նպատակներով օգտագործելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 685-Ն որոշումը.
- ✓ «Հայաստանի Հանրապետությունում հողաշինարարության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 125-Ն որոշումը.
- ✓ «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 14-ի N 26 որոշումը.
- ✓ «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը.
- ✓ «Գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի կադաստրային արժեքների (գների) ու կադաստրային զուտ եկամտի 2007

թվականի չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 607-Ն որոշումը.

- ✓ «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից դուրս, մարզերի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի՝ արոտների և խոտհարքների (բնական կերահանդակներ) 2016 թվականի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի N 898-Ն որոշումը.
- ✓ «Հողերի օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 625-Ն որոշումը.
- ✓ «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշում.
- ✓ Այլ օրենսդրական ակտեր:

Սույն իրավական-վերլուծական փաստաթղթում՝ վերը թվարկված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերից ոչ բոլորի կարգավորման առարկաներին է անդրադարձ կատարվել, հաշվի առնելով ուսումնասիրման դաշտի ծավալները և հիմք ընդունելով այդ իրավական ակտերով սահմանված կարգավորումների անմիջական կամ ոչ անմիջական առնչությունը բնական կերհանդակների կառավարման իրավահարաբերություններին:

Սույն հետազոտության առարկա հանդիսացող բնագավառի ինստիտուցիոնալ նկարագրությունը սահմանելու նպատակով, առաջնահերթ է համարվել ներկայացնել ՀՀ հողային օրենսգրքի այն հիմնական կարգավորումները, որոնք վերաբերելի են արոտների կառավարման գործընթացներին:

ՀՀ հողային օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը և հարաբերությունները:

Առաջին հերթին անհրաժեշտ է ներկայացնել թե ո՞րն է հողային հարաբերության հասկացությունը: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի՝ հողային են համարվում այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են հողամասերի տնօրինման, տիրապետման և օգտագործման կապակցությամբ, ինչպես նաև հողային պաշարների կառավարման առնչությամբ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև:

Մեջբերված իրավանորմի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ հողային իրավահարաբերություններին, ինչպես և քաղաքացիական իրավահարաբերություններին, բնորոշ են սեփականության իրացման հետևյալ եղանակները կամ դրևորումները.

- օգտագործում.
- տիրապետում.
- տնօրինում:

Եվ ահա այս երեք ձևաչափերով, հողի՝ որպես անշարժ գույքի շուրջ ձևավորվող հարաբերությունները համարվում են հողային հարաբերություններ:

Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 6-րդ հոդվածի կարգավորումները, ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը, ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) դասակարգման.

- **գյուղատնտեսական նշանակության.**
- բնակավայրերի.
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության.
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների.
- հատուկ պահպանվող տարածքների.
- հատուկ նշանակության.
- **անտառային.**
- ջրային.
- պահուստային հողերի:

Բացի վերը մեջբերվածից, հարկ է արձանագրել, որ յուրաքանչյուր նպատակային նշանակության հող, ըստ օգտագործման բնույթի, դասակարգվում է հողատեսքերի կամ գործառնական նշանակության հողերի:

Սույն իրավական-վերլուծական աշխատանքի հիմքում ընկած են խոտհարքների և արոտավայրերի կառավարման հետ կապված իրավահարաբերությունները, ինչն ենթադրում է որ հետազոտության այս մասում մանրամասն ուսումնասիրվելու և ներկայացվելու է գյուղատնտեսական նշանակության հողերի մասով սահմանված կարգավորումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի՝ գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը:

Հողատեսքը գյուղատնտեսական և անտառային նշանակության հողերի այն հատկանիշների համալիրն է, որը բնութագրում է դրանց գործառնական օգտագործումը:

Օրենսգրքի նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է գյուղատնտեսական նշանակության հողերը՝ ըստ հողատեսքերի, համաձայն որի, գյուղատնտեսական նշանակության հողերը բաժանվում են՝

- ⇒ վարելահողերի.
- ⇒ բազմամյա տնկարկների.
- ⇒ **խոտհարքների.**
- ⇒ **արոտավայրերի.**
- ⇒ այլ հողատեսքերի:

Վերը մեջբերված իրավանորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ բնական կերհանդակները համարվում են գյուղատնտեսական նշանակության հողեր և դրանց մասով ծագող հարաբերությունների վրա տարածվում են հողային օրենսդրությամբ սահմանված թե՛ իրավական հնարավորությունները, և թե՛ սահմանափակումները:

Այսպես՝ բնական կերհանդակները, ինչպես և գյուղատնտեսական մյուս հողատեսքերը, ենթակա են հատուկ պահպանության, ինչը իրավաբանական

տեսանկյունից համարվում է օրենսդրական երաշխիք կամ սկզբունք, որն իր արտահայտումն է գտել ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում:

ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը նաև սահմանում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով: Մեջբերված հղումով իրավանորմի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ հողատեսքերի նպատակային նշանակության հնարավոր փոփոխելու տարբերակները միտված են նպաստելու պետության ներսում ներդրումների խրախուսմանը և ներդրումային քաղաքականության բարելավմանը:

Գյուղատնտեսական նշանակության հողերի, այդ թվում՝ խոտհարքների և արոտավայրերի օգտագործման կարգը որոշում են հողամասերի սեփականատերերը, օգտագործողները՝ հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման, հողերի օգտագործման սխեմաներին և հողաշինարարական այլ փաստաթղթերին ու նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: Այս օրենսդրական կարգավորումից բխում է, որ սեփականատերը, այդ թվում՝ համայնքը, ինքն է որոշում խոտհարքի կամ արոտավայրի օգտագործման կարգը, իհարկե՝ հիմք ընդունելով սահմանված օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ չափորոշիչները:

Բնական կերհանդակների օգտագործման մասով ՀՀ հողային օրենսգիրքը սահմանել է առանձնահատկություն, որը ի թիվս գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համարվում է սահմանափակում: Այսպես՝ ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանվում են հողամասերի վարձակալության հետ կապված իրավահարաբերությունները, որի 3-րդ մասը սահմանում է հետևյալը.

Պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս, նախապատվության իրավունք ունի:

Այս կարգավորումից բխում է, որ օրենսդիրը բնական կերհանդակների օգտագործման տրամադրելու մասով՝ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար սահմանել է պարտավորություն կամ իմպերատիվ պահանջ, որ

Նշված հողատեսքերը վարձակալության կարող են տրվել առավելագույնը 25 տարի ժամկետով:

Բացի վերը նշվածից անհրաժեշտ է փաստել, որ ՀՀ հողային օրենսգրքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է արոտավայրերի օգտագործման տրամադրելու մասով պայման, մասնավորապես ամրագրելով հետևյալը՝ արոտավայրերը վարձակալությամբ տրամադրվում են անասնապահությամբ զբաղվելու պայմանով: Նշված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը էական նշանակություն է տալիս արոտավայրերի ըստ նպատակային նշանակության օգտագործման, ինչի վառ ապացույցը այդ հողամասերի վարձակալության տրամադրման համար օրենքով սահմանված պայմանն է:

Իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ արոտավայրերը բաշխված են պետական և համայնքային մակարդակներում: Արոտավայրերը, որպես հանրային սեփականություն ընդգրկված են համայնքների վարչական սահմաններում և համարվում են թե՛ պետական և թե՛ համայնքային սեփականություն: Այս բնորոշումից հետևում է, որ արոտավայրերի կառավարման գործընթացներում հիմնական դերակատարներն են համարվում առավելապես՝ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի և ՀՀ հողային օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված իրավանորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում հողերը, այդ թվում՝ արոտավայրերն ու խոտհարքները, ըստ սեփականության ձևի պատկանում են՝

- ⇒ ֆիզիկական անձանց.
- ⇒ իրավաբանական անձանց.
- ⇒ համայնքին.
- ⇒ պետությանը:

Նշված պնդումը առավել հիմնավորում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդվածը, որով սահմանվում են սեփականության իրավունքի սուբյեկտները: Համաձայն մեջբերված հոդվածի 1-ին մասի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո:

Իրավակիրառական պրակտիկայում հայտնի են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները: Նշված հոդվածի իրավակարգավորման առարկայի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ դրանով նախատեսված են նաև սահմանափակումներ արոտավայրերի տնօրինման մասով, մասնավորապես՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ զբաղեցված են ընդհանուր օգտագործման արոտավայրերով, անասունների անցատեղերով, ճանապարհներով, բնական ջրհորներով, աղբյուրներով և տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ, այլ օբյեկտներով:

Հարկ է արձանագրել, որ հողային օրենսդրությունը չի սահմանում <<ընդհանուր օգտագործման արոտավայր>> հասկացությունը, հետևաբար իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունների արդյունքում, կարելի է եզրահանգել, որ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը համարվում են ընդհանուր օգտագործման արոտավայրեր: Նշված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պետական և համայնքային սեփականության արոտավայրերը կարող են օտարվել արոտավայրի գործառնական նշանակությունը օրենքով սահմանված կարգով այլ հողատեսքի փոփոխելու դեպքում միայն, օրինակ՝ արոտավայրը որպես խոտհարք դարձնելով և ապա նոր դրա օտարման գործընթացը կազմակերպելու ձևով:

Համայնքի ղեկավարը՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողերը կարող են օտարվել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան:

ՀՀ հողային օրենսգրքի 18-րդ գլուխը սահմանում է գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության առանձնահատկությունները, որոնք

վերաբերելի են նաև բնական կերհանդակների շուրջ ձևավորվող իրավահարաբերություններին:

Այսպես՝ ՀՀ հողային օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանվում է, որ գյուղատնտեսական նշանակության հողերը տրամադրվում են քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության կամ օգտագործման իրավունքով՝

- ✓ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, գիտահետազոտական և ուսումնական.
- ✓ խոտհնձի և անասունների արածեցման.
- ✓ գյուղատնտեսական արտադրական շենքերի, շինությունների կառուցման.
- ✓ բացառիկ դեպքերում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի, շինությունների կառուցման ու սպասարկման և օրենսդրությամբ չարգելված այլ գործողությունների իրականացման նպատակներով:

Օրենսդրական վերը մեջբերված կարգավորումներից ակնհայտ է դառնում, որ արոտավայրերի և խոտհարքների տրամադրումը իրականացվում է խոտհնձի և անասունների արածեցման նպատակներով:

Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման իրավունքը դրսևորվում է վարձակալությամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրելու միջոցով: Խոտհարքների կամ արոտավայրերի հողերի վարձակալությունը՝ հողամասերի, դրանց վրա ամրակայված գույքի հետ միասին կամ առանց դրա որոշակի ժամկետով, վարձավճարի դիմաց հանձնելն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց՝ գյուղատնտեսական գործունեության համար:

Հողամասի վարձակալության պայմանագրով ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության համար վարձավճարի նվազագույն չափը սահմանվում է տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափից ոչ պակաս: Փաստորեն, օրենսդիրը՝ պետական և համայնքային խոտհարքների և արոտավայրերի մասով սահմանել է վարձակալության նվազագույն շեմ, դրանով տեղական ինքնակառավարման մարմինների համար ուղենիշ դնելով, վարձակալության պայմանագրերը կնքելիս առաջնորդվել այդ սկզբունքով:

ՀՀ հողային օրենսգրքի 96-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ պետական և համայնքային սեփականության հողերից, ներառյալ՝ անտառային ֆոնդից, խոտհնձի և անասունների արածեցման համար, տրամադրված հողամասերի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման: Մեջբերվածից հետևում է, որ եթե օրինակ՝ համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրը վարձակալությամբ տրամադրվել է որևէ քաղաքացու կամ տնտեսավարող սուբյեկտի, ապա վերջինս, հիմք ընդունելով օրենսդրական վերը նշված պահանջը, կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա դիմում է կադաստրի կոմիտե հողամասի նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցելու նպատակով:

Բացառություն են կազմում այն արոտավայրերի և խոտհարքների վարձակալության պայմանագրերը, որոնք կնքվում են ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի ՀՀ արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման հիման վրա՝ պարզեցված կարգով: Այս դեպքում արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագրից բխող օգտագործման իրավունքը ենթակա չէ պետական գրանցման:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է, որ հողամասերի տրամադրման այլ հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տվյալ համայնքի կամ մարզի բնակիչներին:

ՀՀ հողային օրենսգրքի 96-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն, խոտհնձի և անասունների արածեցման համար քաղաքացիներին և իրավաբանական անձանց հողամասեր տրամադրելու կարգը սահմանում է կառավարությունը: Օրենսդրական դաշտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ հողային օրենսգրքի վերը մեջբերված պահանջի ամբողջությամբ չի կատարվել: Հարկ է նշել, որ դեռևս ուժի մեջ է մնում ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1983 թվականի ապրիլի 27-ի թիվ 364 որոշմամբ հաստատված ՀՀ ՍՍՀՄ անտառներում խոտհնձի և անասունների արածեցման կանոնները>>: Չնայած այն հանգամանքին, դեռևս խորհրդային իշխանության տարիներին ընդունված այս ենթաօրենսդրական ակտը ամբողջությամբ վերաբերելի չէ ՀՀ հողային օրենսգրքի 96-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսված կարգավորումներին, այնուհանդերձ նման իրավիճակը կարելի է գնահատել չկարգավորված: Վերոգրյալը հաշվի առնելով:

Առաջարկվում է մշակել և ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ ՀՀ խոտհնձի և անասունների արածեցման

համար քաղաքացիներին և իրավաբանական անձանց հողամասեր տրամադրելու կարգը սահմանելու մասին>>: Միաժամանակ, հաշվի առնելով դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ԽՍՀՄ ՄԽ-ի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտի ուժի մեջ գտնվելու կարգավիճակը, առաջարկվում է մշակել և ընդունել ՀՀ կառավարության որոշման նախագիծ «Հայաստանի Հանրապետության անտառներում խոտհնձի և անասունների արածեցման կարգը սահմանելու մասին>>:

Բացի նրանից, որ արոտները և խոտհարքները համարվում են գյուղատնտեսական նշանակության հողեր, դրանք նաև իրենց տեղն են գտել անտառային հողատեսքերի դասակարգման մեջ: Մասնավորապես՝ ՀՀ հողային օրենսգրքի 25-րդ հոդվածը սահմանում է անտառային հողերի հետ կապված իրավակարգավորումները, որի 3-րդ մասը սահմանում է անտառային հողերի հողատեսքերի դասակարգումը: Անտառային հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝

- անտառների.
- վարելահողերի.
- **խոտհարքների.**
- **արոտների.**
- թփուտների.
- այլ հողերի:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ հողային օրենսգիրքը անտառային հողերի դասակարգման մեջ սահմանել է նաև արոտները և խոտհարքները, այնուամենայնիվ ՀՀ անտառային օրենսգրքի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արոտների և խոտհարքների մասով կարգավորումներ չկան սահմանված: Անտառների, հետևաբար նաև անտառային հողերի կառավարման հետ կապված կարգավորումները նախատեսված են ՀՀ անտառային օրենսգրքով, ուստի բաց է մնում այն խոտհարքների և արոտների կառավարման հետ կապված իրավակարգավորումները, որոնք դիտարկվում են որպես անտառային հողեր:

Վերը նշվածի մասին է վկայում ՀՀ անտառային օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված անտառային հողերի հասկացությունը, այն է՝ անտառային հողեր են համարվում անտառապատ, կենդանական և բուսական աշխարհի պահպանման, բնության պահպանության, ինչպես նաև անտառով չծածկված, բայց անտառային

տնտեսության կարիքների համար տրամադրված կամ նախատեսված հողեր: Իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ արոտների և խոտհարքների մասով որևէ ամրագրում չկա սահմանված, ինչն իր հերթին օրենսդրական բացը շարունակել է տալիս ՀՀ անտառային օրենսգրքի ամբողջ բովանդակության մեջ:

Վերը մեջբերված հիմնավորումից հետևում է, որ այն արոտներն ու խոտհարքները, որոնք գտնվում են անտառներում և ունեն արոտի կամ խոտհարքի հողատեսքի կարգավիճակ, դուրս են մնացել դրանց բնորոշ կառավարման համատեքստից և ընգրկված են համահավասար պայմաններով՝ անտառային իրավահարաբերություններում:

Արոտների կառավարման գործընթացի կազմակերպման և իրականացման մասով մեծ և էական դերակատարում ունեն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները: Ստորև ներկայացվում են արոտների կառավարման իրավահարաբերություններին վերաբերող <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգավորումները:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը ունի բազմաֆունկցիոնալ կարգավորման բնույթ և դա տրամաբանական է, քանի որ համայնքի ղեկավարին և ավագանուն Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ վերապահված են 300-ից ավելի լիազորություններ, որոնք ընդգրկված են 25 և ավելի ոլորտներում (բնագավառներում):

Այս օրենքով արոտների կառավարման իրավահարաբերությունների վերաբերող ուղղակի կարգավորումներ սահմանված չեն, սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ համայնքի ղեկավարի համար սահմանված են բազմաթիվ սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորություններ, որոնք ընդգրկում են հողօգտագործման, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի պահպանության, անասնաբուժության, անասնաբուծության և բուսասանիտարիայի բնագավառները:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը սահմանում է համայնքի գործադիր մարմնի՝ համայնքի ղեկավարի և համայնքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու լիազորությունները և դրանց իրականացման կարգը, ինչը ենթադրում է, որ նշված օրենքի կարգավորումների համատեքստում են ընդունվում նաև համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարմանը միտված որոշումները:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանվում են համայնքի պարտադիր խնդիրները, որոնք թվով 20 են: Ատորև ներկայացվում են օրենքով սահմանված համայնքի այն պարտադիր խնդիրները, որոնք ուղղակի կամ անուղղակի կարող են կապ ունենալ տեղական ինքնակառավարման մակարդակում արոտների կառավարման գործընթացների հետ:

- ⇒ համայնքի գույքի կառավարումը.
- ⇒ համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.
- ⇒ համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:

Համայնքի գույքի կառավարումը ընտրվել է որպես առաջին պարտադիր խնդիր, որի լուծումը ենթադրող գործողություններում բնականաբար հնարավոր չէ անդրադարձ չկատարել համայնքային արոտավայրերի և խոտհարքների կառավարմանը: Համայնքի այս պարտադիր խնդրի հիման վրա <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով համայնքի ղեկավարի մասով սահմանված է ոլորտային լիազորություններ, մասնավորապես՝ հողօգտագործման բնագավառում, ինչը ենթադրում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի, այդ թվում՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հետ կապված իրավակարգավորումներ: Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի մաս են կազմում համայնքային հողերը, այդ թվում և արոտավայրերը, ուստի համայնքի գույքի հաշվառման, պլանավորման և օտարման գործընթացներն անմիջականորեն կապ են ունենում համայնքային արոտավայրերի և խոտհարքների կառավարման հետ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության զարգացման և շրջակա միջավայրի պահպանության վերաբերող համայնքի պարտադիր խնդիրներին, ապա հարկ է նկատել, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը, նշված պարտադիր խնդիրների հիման վրա սահմանել է ոլորտային լիազորություններ, մասնավորապես՝ գյուղատնտեսության, անասնաբուժության, անասնաբուծության, բուսասանիտարիայի և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում: Այս ոլորտային լիազորությունների շրջանակը ուսումնասիրելիս, ակնհայտ է դառնում այդ լիազորությունների իրականացման անմիջական և ոչ անմիջական կապը արոտավայրերի և խոտհարքների կառավարման հետ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածի 2-րդ մասի համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Սահմանադրական վերը նշված կարգավորումը որևէ կերպ չի արտահայտվել և չի պարզաբանվել ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը համայնքին չի դիտարկում որպես իրավաբանական անձ, փոխարենը 128-րդ հոդվածով սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Ինչպես նաև սահմանում է, որ պետության և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից:

Վերը նշվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը համայնքների կարգավիճակը քաղաքացիական իրավահարաբերություններում հավասարեցրել է իրավաբանական անձանց հետ:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանվում են համայնքի գույքի կառավարման հետ կապված իրավահարաբերությունները, որոնք մանրամասն կներկայացվեն սույն իրավական-վերլուծական աշխատանքի 1.3-րդ՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և որոշումների շրջանակը նկարագրող բաժնում:

Արոտների կայուն կառավարման քաղաքականության իրագործման մեջ իր էական նշանակությունն ունի «Հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքով սահմանվում են հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

«Հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը սահմանում է այն հիմնական գործիքակազմերը և դերակատարներին, որոնցով կամ որոնց միջոցով վերահսկվում կամ կարող է վերահսկվել արոտների կառավարման գործընթացները թե՛ պետական, և թե՛ համայնքային մակարդակներում:

Մեջբերված օրենսդրական ակտի կարգավորման առարկայի մանրամասներին և դրանով սահմանված իրավական կառուցակարգերին առավել մանրամասն ներկայացված են սույն հետազոտական աշխատանքի 1.4-րդ՝ արոտների կայուն կառավարման գործընթացների իրականացման նկատմամբ վերահսկողությունը, մշտադիտարկումները և դրանցից բխող պատասխանատվության շրջանակները սահմանող բաժնում:

Հայաստանի Հանրապետությունում վարվում է բուսական աշխարհի կադաստրը, որն իրենից ենթադրում է բուսական աշխարհի օբյեկտների իրավական ռեժիմի, քանակական և որակական բնութագրերի, վիճակի, բնապահպանական, մշակութային և տնտեսական արժեքների, աշխարհագրական և վարչատարածքային տարածվածության, պաշարների և օգտագործման մասին տեղեկությունների ու փաստաթղթերի համակարգ: Պետական և համայնքային արտավայրերը և խոտհարքները, համարվում են նաև բուսական աշխարհը իրենց վրա <<կրողները>>, հետևաբար՝ արոտների կառավարման գործընթացները անմիջական կապի մեջ են գտնվում բուսական աշխարհի իրավահարաբերությունները սահմանող օրենսդրության, մասնավորապես՝ <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքի հետ:

<<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում: Համաձայն վերը մեջբերված օրենքի 12-րդ հոդվածի՝ բուսական աշխարհի պետական մոնիտորինգն իրականացվում է բուսական աշխարհի պահպանության և շարունակական օգտագործման կազմակերպման նպատակով: Միաժամանակ, մոնիտորինգ է կազմակերպվում նաև բույսերի աճելավայրերի և էկոհամակարգերի վիճակի վերաբերյալ:

Արժանահավատ է նաև դիտարկել այն հանգամանքը, որ <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը, մասնավորապես՝ 13-րդ հոդվածը սահմանում է բուսական աշխարհի պետական հաշվառման և կադաստրի վարման հետ կապված իրավահարաբերությունները, ինչը ոչ անմիջականորեն առնչվում է նաև արոտների և խոտհարքների, դրանցում ձևավորված կենսաբազմազանության հետ: Այսպես՝ համաձայն նշված օրենքի 13-րդ հոդվածի՝ բուսական աշխարհի պետական հաշվառումը և կադաստրի վարումը նպատակ ունեն բացահայտելու բուսական տեսակների ու համակեցությունների, դրանց աճելավայրերի քանակական և որակական փոփոխությունները: Բուսական աշխարհի պետական հաշվառումն

իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան տասը տարին մեկ անգամ: Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է, որ առանձին դեպքերում այն կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

<<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածներով սահմանվում են.

- ✓ բուսական աշխարհի պահպանության և պաշտպանության խնդիրները.
- ✓ բուսական աշխարհի պահպանության իրավական միջոցները.
- ✓ բուսական աշխարհի պաշտպանությունը:

Այստեղ, առանձնակի կարևորության է արժանի օրենքի 27-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, որոնք սահմանում են բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործողի պարտականությունների շրջանակը: Մեջբերված իրավանորմի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործողը պարտավոր է՝

- գործել բնության պահպանության մասին օրենսդրության պահանջներին համապատասխան.
- ապահովել բուսական աշխարհի՝ իրեն հատկացված օբյեկտների պահպանությունը.
- չխախտել բնական բուսական համակեցությունների ամբողջականությունը.
- իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ բուսական աշխարհի օբյեկտների վերարտադրության և պաշտպանության նպատակով.
- աջակցել պետական մարմինների գործունեությանը՝ բուսական աշխարհի օբյեկտների հսկողության, պետական հաշվառման և մոնիտորինգի իրականացման համար.
- ժամանակին մուծել բուսական աշխարհից օգտվելու համար սահմանված վճարները.
- չխախտել բուսական աշխարհի այլ օգտագործողների իրավունքները.
- կատարել պայմանագրային պարտականությունները:

Վերը մեջբերված իրավակարգավորումների վերլուծության համատեքստում, կարելի է արձանագրել, որ մեջբերված պարտավորությունները վերաբերելի են նաև պետական և համայնքային սեփականություն համարվող արոտավայրերը և խոտհարքները տնօրինողներին կամ օգտագործողներին:

Արոտների կայուն կառավարման քաղաքականության իրագործման տեսանկյունից իր կարևոր դերակատարումն ունի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումը:

Այս որոշումամբ սահմանվում են.

- ⇒ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը.
- ⇒ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության, կառուցապատման իրավունքի տրամադրման, անհատույց օգտագործման և վարձակալության պայմանագրերի օրինակելի ձևերը.
- ⇒ ուժը կորցրած են ճանաչվել արոտների և խոտհարքների կառավարմանը վերաբերող ՀՀ նախարարների խորհրդի մի շարք որոշումներ:

<<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումամբ սահմանված կարգը, հստակ նախատեսում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու գործողությունները, նկարագրելով համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, այդ թվում՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հետ կապված ընթացակարգերը:

Ընդհանուր առմամբ, կառավարության այս որոշումը նպատակ ունի ապահովելու ՀՀ հողային օրենսգրքի՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառավարման հետ կապված սահմանված իրավակարգավորումների կիրարկումը:

Արոտների կառավարման գործընթացներում, մասնավորապես՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման տրամադրման կամ օտարման հարաբերություններում, այս ենթաօրենսդրական ակտը ունի առաջնային դերակատարում և այս հարցերում ուղենիշ է համարվում համայնքների ղեկավարների համար:

Արոտների կառավարման ինստիտուցիոնալ նկարագրությունը ծավալուն ուսումնասիրություններ ենթադրող փաստաթուղթ է, սակայն սույն բաժնում արված օրենսդրական վերլուծությունները և ուսումնասիրությունները սահմանափակված են բացառապես այն օրենսդրական ակտերին անդրադարձ կատարելու մասով, որոնցով ուղղակիորեն սահմանված են արոտների կառավարմանը բնորոշ օրենսդրական կարգավորումները:

1.2. Արոտների կայուն կառավարման հետ կապված իրավահարաբերությունները և ընթացակարգերը սահմանող հիմնական իրավական ակտերի իրավակարգավորման առարկան

Արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման գործընթացների կազմակերպման իմաստով հատկանշական են ՀՀ կառավարության կողմից ընդունված երկու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Այսպես՝ ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի հոկտեմբերի 28-ին ընդունվել է <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշումը, իսկ 2011 թվականի ապրիլի 14-ին՝ <<Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> N 389-Ն որոշումը:

Հարկ է արձանագրել, որ վերը մեջբերված ՀՀ կառավարության որոշումներից երկրորդը՝ <<Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> N 389-Ն որոշումը, ընդունվել է, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ին ընդունված <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման 5-րդ կետի պահանջները:

Ստորև ներկայացվում են արոտավայրերի և խոտհարքների օգտագործման ընթացակարգային կարգորոշումները սահմանող ՀՀ կառավարության երկու որոշումների իրավակարգավորման առարկանները՝ առանձին-առանձին:

<< կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշում: Կառավարության այս որոշման հիմքում դրված չէ որևէ ոլորտային օրենքի պահանջ, որի հիման վրա պետք է ընդունվեր արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու

կարգը սահմանող որոշում: Այն ընդունվել է բացառապես հիմք ընդունելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի (այժմ՝ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք) այն դրույթը, որով կառավարությունը իրավասու է ընդունել ենթաօրենսդրական ակտեր:

Կառավարության այս որոշմամբ սահմանվել են հետևյալ հիմնական իրավակարգավորումները.

- ✓ Սահմանվել է, որ պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը պետք է կնքվեն պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով.
- ✓ Արոտավայրերից օգտվելու վճարի չափը սահմանվել է տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար.
- ✓ Խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանվել է տվյալ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:
- ✓ Որոշման NN 1 և 2 հավելվածներով հաստատվել են արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը:
- ✓ Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարներին համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու տրամադրումն իրականացնել այդ որոշմամբ սահմանված կարգով:

Վերը նշված կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշումը ընդունվել է պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների մասով, սակայն այդ որոշման 6-րդ կետով, առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ ի ղեկավարումն ընդունել, համայնքային սեփականության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման գործընթացները կազմակերպելիս:

Ինչպես արդեն նշվել է, վերը մեջբերված ենթաօրենսդրական ակտով սահմանվել են արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը, որոնք ըստ էության համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրի կնքման պահանջներին, սակայն

արտահայտում են բացառապես այն հատկորոշումները, որոնք վերաբերելի են պետական կառավարման մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիր կնքելուն: Այսինքն՝ պայմանագրերի օրինակելի ձևերը չեն արտահայտում այն հարաբերությունները, երբ արտավայրի կամ խոտհարքի սեփականատերը համարվում է օրինակ՝ համայնքը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Առաջարկվում է փոփոխություն և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման մեջ, մասնավորապես՝ որոշման 1-ին կետում լրացնել <<և համայնքային>> բառերը, իսկ արտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը համապատասխանեցնել նաև համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի և խոտհարքների օգտագործման գործընթացների առանձնահատկություններին:

ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> N 389-Ն որոշումը: Որոշման ընդունման նորմատիվ հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման 5-րդ կետը: Անհրաժեշտ է փաստել, որ որոշման ընդունման հիմքում բացակայում է որևէ հղում Հայաստանի Հանրապետության օրենքներին, ինչը վկայում ՀՀ հողային օրենսդրությունում նման հղում ենթադրող օրենսդրական կարգավորման բացակայության մասին, այսինքն՝ ՀՀ հողային օրենսգիրքը պետք է արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու իրավասություն վերապահեր ՀՀ կառավարությանը:

ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> N 389-Ն որոշմամբ սահմանվել են հետևյալ հիմնական կարգորոշումները.

- ✓ Հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը՝ համաձայն այդ որոշման հավելվածի:

- ✓ Առաջարկվել է Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարներին համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործումն իրականացնել այդ որոշմամբ սահմանված կարգով:

Ի տարբերություն 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման, ՀՀ կառավարության այս որոշումը կարգավորում է ընթացակարգային հարաբերություններ, այսինքն՝ սահմանում է արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը: Սակայն հարկ է նկատել, որ որոշմամբ սահմանված կարգում առկա են բազմաթիվ բացեր, որոնց <<պատասխանները>> ՀՀ ներպետական օրենսդրությունը ամբողջությամբ չի տալիս: Մասնավորապես՝ որոշման բովանդակությունից պարզ չի դառնում թե պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման տարամադրող պետական մարմինը ո՞րն է, սակայն օրենսդրության համալիր ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում որ համայնքի ՏԻՄ-երն են, այստեղ առաջ է գալիս հաջորդ հարցը, թե համայնքի ավագանին ինչու՞ իրավունք չունի սահմանելու այլ վճարի չափ, օրինակ ավելի բարձր, քան թե արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի չափն է:

Մյուս հերթին, կառավարության այդ որոշմամբ սահմանված է, որ արոտավայրերից կամ խոտհարքներից օգտվելու պայմանագրերը կնքվում են պարզ գրավոր ձևով՝ մինչև 3 տարի ժամկետով, մինչդեռ ՀՀ հողային օրենսգիրքը, որն առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող օրենսդրական ակտ է, սահմանել է առավելագույնը 25 տարի ժամկետը:

Հաջորդ կարևոր հանգամանքը, որ այս որոշումը, ինչպես և նախորդը, կարգավորում են պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի և խոտհարքների կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները: Սակայն, որոշման ներածական մասում առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործումը իրականացնելիս այս որոշումը ընդունել ի ղեկավարումն:

ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի <<Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը

սահմանելու մասին>> N 389-Ն որոշմամբ սահմանված կարգի նպատակներն ու խնդիրներն են սահմանվել՝

- ⇒ Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների պահպանության և կայուն ու արդյունավետ օգտագործման գործընթացներին նպաստումը.
- ⇒ արոտավայրերի և խոտհարքների բերքատվության բարձրացման և վերականգնման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- ⇒ արոտավայրերի և խոտհարքների որակական բնութագրերի և բնապահպանական վիճակի վատթարացման կանխումը.
- ⇒ արոտավայրերի և խոտհարքների սանիտարական վիճակում պահպանության ապահովմանը նպաստելը:

Այս ենթաօրենսդրական ակտով սահմանվում են՝

- մինչև արոտավայրի օգտագործումը՝ արոտավայրերի օգտագործման պլան մշակելու անհրաժեշտությունը.
- արոտաշրջանառության սկզբունքները.
- արոտային շրջանի տևողությունը.
- արոտային թույլատրելի բեռնվածության հաշվարկման կարգը.
- հերթափոխային արածեցման կիրառման սկզբունքները.
- բնական խոտհարքների կառավարման ընդհանուր կանոնները և այլն:

Հարկ է արձանագրել, որ իրավակիրառական պրակտիկային հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ պետական սեփականություն հանդիսացող հողերի կամ առհասարակ գույքի կառավարման հետ կապված իրավահարաբերություններ սահմանող ենթաօրենսդրական ակտեր են ընդունվել, որոնք սակայն համայնքային սեփականության գույքի կառավարման գործընթացների մասով կարգորոշումներ չեն սահմանել: Նման օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են լրջագույն իրավաիրացնող խնդիրների հանգեցնել գործնականում:

ՀՀ կառավարության՝ արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանող երկու որոշումներն էլ անմասն չեն մնում նման նախադեպերից: Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների տնօրինողներն են համարվում համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց որոշումների ընդունման ընթացակարգերը էականորեն տարբերվում են Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության կամ

տարածքային կառավարման մարմինների որոշումների ընդունման ընթացակարգերից: Եվ հենց այս իմաստով է, որ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համար առաջանում են բազմաթիվ խնդիրներ և հարցեր համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերի հաստատման, օգտագործման և օտարման գործընթացների իրականացման ընթացքում:

ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՀ Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշմամբ սահմանված կարգը լիարժեքորեն չի սահմանում արտավայրերի և խոտհարքների օգտագործման գործընթացի կազմակերպման ընթացակարգը: Դրանով սահմանվում են արտավայրերի և խոտհարքների՝ համապատասխանաբար արածեցման և խոտհունձի պայմանները, մինչդեռ օգտագործման կարգը պետք է ենթադրել դրանից ավելին՝ կառավարմանը բնորոշ կարգորոշումներ: Կարգը, ըստ էության պետք է սահմաներ թեկուզ պետական սեփականություն հանդիսացող արտավայրերի և խոտհարքների մասով, պետական կամ տարածքային կառավարման մարմնի ընթացակարգային գործառույթները, քայլերն ու գործողությունները, դրանց հաջորդականությունը, ընդունվելիք որոշումների տեսակները կամ շրջանակը, ժամկետներ և այլն:

Բայց ինչպես երևում է ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՀ Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշմամբ սահմանված կարգի բովանդակությունից, դրանք իրենց արտահայտումն չեն ունեցել այս ենթաօրենսդրական ակտում, որն իր հերթին կարող է առաջացնել իրավակիրառական խնդիրներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արոտների կառավարման հետ կապված գործառույթները և լիազորությունները, անկախ դրանց պետական կամ համայնքային սեփականության ձևից, պատվիրակված են համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, ուստի **առաջարկվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ, ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը, փոխարենը, առաջարկվում է որ այդ կարգը սահմանվի համայնքի ավագանու կողմից, միաժամանակ նման օրենսդրական պահանջ նախատեսելով**

ՀՀ հողային օրենսգրքում և ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում:

Հարկ է նկատել, որ վերը մեջբերված առաջարկության համատեքստում, իր լուծումներն է առաջադրել նաև <<<< արտոնների կայուն կառավարման հայեցակարգը>> (այսուհետ՝ Հայեցակարգ), որում առաջադրված մեխանիզմը կայանում է նրանում, որ ուժը կորցրած ճանաչվի ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը, իսկ դրանում առկա կարգավորումները արտացոլվեն ՀՀ հողային օրենսգրքում: Հայեցակարգում նույնաբովանդակ առաջարկ է արվել նաև <<Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության N 1477-Ն որոշման մասով: Մեջբերված երկու որոշումների մասով, սույն փաստաթղթի շրջանակում արված առաջարկությունները էականորեն տարբերվում է Հայեցակարգով սահմանված առաջարկությունների և՛ բովանդակությունից և՛ տրամաբանությունից: Այն առավելապես հիմնավորվում է այն հանգամանքով, որ օրենքով հնարավոր չէ սահմանել ամբողջական ընթացակարգեր, ինչպիսին որ արված է կառավարության որոշումներով:

Սույն փաստաթղթով առաջարկվում է լիազորությունը սահմանել ՏԻՄ օրենքով, ինչը նշված է սույն աշխատանքի առաջարկություններ բաժնում, իսկ օգտագործման կարգը ավագանու որոշմամբ, քանի որ գործող Սահմանադրության 182-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումների համատեքստում, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները չեն կարող սահմանվել կառավարության որոշումներով: Հետևաբար, հիմնավոր է համարվել ավագանու որոշման օրինակելի ձև մշակելու տեսքով հարցին լուծում տալը:

Ավելին, պետք է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում, համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները, ինչը ենթադրում է, որ ընթացակարգային կարգավորումները պետք է սահմանվեն համայնքի ավագանու որոշմամբ, որի հիման վրա համայնքի ղեկավարը կկազմակերպի և կիրականացնի արտոնների կառավարման գործընթացները և դրանցից բխող իրավահարաբերությունները:

1.3. Աղյուսակ 1. *Արտոնների կառավարմանը վերաբերող հիմնական օրենսդրական կարգավորումները, արտոնների կառավարման պլանավորման կառուցակարգերը և ՏԻՄ-երի որոշումների շրջանակը*

N	Քաղաքիչի	Ընդհանուր նկարագրությունը
---	----------	---------------------------

	անվանումը	
1	Արտուրների կառավարման հետ կապված հիմնական օրենսդրական կարգավորումները	ՀՀ հողային օրենսգրքի կարգավորման համադրությամբ՝ արտուրների կառավարման հետ կապված հարաբերությունները համարվում են հողային իրավահարաբերություններ: ՀՀ հողային օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտուրավայրերի և խոտհարքների կառավարումը վերապահված է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին: Արտուրների կառավարման հետ կապված իրավահարաբերությունները սահմանվում են երկու տասնյակից ավելի օրենքներով, իսկ հիմնական ընթացակարգային իրավահարաբերությունները՝ «Արտուրավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն, «Հայաստանի Հանրապետությունում արտուրավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն և «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտման, կառուցապարման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշումներով: ՀՀ հողային օրենսգրքի կարգավորումների համադրությամբ, արտուրավայրերը և խոտհարքները, որպես հողատեսքեր, մաս են կազմում գյուղատնտեսական նշանակության և անտառային հողերի: Բնական կերհանդակները, ինչպես և գյուղատնտեսական մյուս հողատեսքերը, ենթակա են հատուկ պահպանության, ինչը իրավաբանական տեսանկյունից համարվում է օրենսդրական երաշխիք կամ սկզբունք, որն իր արտահայտումն է գտել ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում: Խոտհարքների և արտուրավայրերի օգտագործման կարգը որոշում են հողամասերի սեփականատերերը, օգտագործողները՝ հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման, հողերի օգտագործման սխեմաներին և հողաշինարարական այլ փաստաթղթերին ու նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: Պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերինը, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում,

		վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս, նախապատվության իրավունք ունի: Սակայն, գործադիրը՝ համապատասխան որոշմամբ վարձակալության առավելագույն ժամկետը է սահմանել մինչև 3 տարին:
		ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն, ընդհանուր օգտագործման արտադրայրերը ենթակա չեն օտարման: Սեփականության իրավունքով արտադրայրը կարող է օտարվել, օրենքով սահմանված կարգով դրա գործառնական նշանակությունը այլ հողատեսքի փոփոխելու դեպքում միայն:
		Արտադրայրերի և խտրհարքների օգտագործման իրավունքով տրամադրումը իրականացվում է խտրինձի և անասունների արածեցման նպատակներով: Անտառային ֆոնդից, խտրինձի և անասունների արածեցման համար, տրամադրված հողամասերի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտադրայրերի և խտրհարքների վարձակալության պայմանագրերից բխող օգտագործման իրավունքը ենթակա է պետական գրանցման, բացառությամբ՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի ՀՀ Արտադրայրերից և խտրհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշմամբ սահմանված պարզեցված կարգով կնքված պայմանագրերի:
		ՀՀ հողային օրենսգրքը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության համար վարձավճարի նվազագույն չափը սահմանել է տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափից ոչ պակաս, իսկ գործադիրը՝ համապատասխան որոշմամբ սահմանել է, որ արտադրայրի կամ խտրհարքի վարձակալության վճարը պետք է սահմանվի այդ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:
		ՀՀ Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգը, հստակ նախատեսում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու գործողությունները, նկարագրելով համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, այդ թվում՝ արտադրայրերի և խտրհարքների կառավարման հետ կապված ընթացակարգերը:
		ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի ՀՀ Արտադրայրերից և խտրհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշումը ունի իր էական դերակատարումը արտոնների կառավարման հետ կապված հարաբերություններում: Այս որոշմամբ

		սահմանվում են՝ պետական սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արտադրարարներից կամ խոտհարքներից օգտվելու ձևերը, արտադրարարներից և խոտհարքներից օգտվելու վճարի չափը: Այս որոշմամբ սահմանված կարգը հիմք է հանդիսանում համայնքների ՏԻՄ-երի համար, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտադրարարները և խոտհարքները օգտագործման տրամադրելիս: ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՀ Հայաստանի Հանրապետությունում արտադրարարների և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշումը ևս կարևոր նշանակություն ունեցող կարգավորող օրենսդրական ակտ է: Նշված որոշմամբ՝ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում արտադրարարների և խոտհարքների օգտագործման կարգը և առաջարկվել է համայնքների ղեկավարներին համայնքային սեփականություն հանդիսացող արտադրարարների և խոտհարքների օգտագործումն իրականացնել այդ որոշմամբ սահմանված կարգով:
2	Արտյունների կառավարման պլանավորումը	Արտյունների կայուն կառավարման հիմնական գործիքներից մեկը հանդիսանում է հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագիրը, որն ի թիվս համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողերի, կալանավորի արտյունների և խոտհարքների օգտագործումն, բարելավումն ու կայուն կառավարումը: Այս ծրագրում բացի համայնքային սեփականություն հանդիսացող արտադրարարներից և խոտհարքներից, կարող են ներառվել նաև համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արտադրարարները և խոտհարքները: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումների համապատասխան, համայնքի ղեկավարի կողմից պարտադիր գույքագրման են ենթակա նաև համայնքային սեփականություն համարվող արտադրարարներն ու խոտհարքները, դրանց ենթակառուցվածքները, այդ թվում՝ համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արտադրարարներն ու խոտհարքները: ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՀ Հայաստանի Հանրապետությունում արտադրարարների և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» N 389-Ն որոշման համաձայն, համայնքի ղեկավարը՝ մշակում է արտադրարարների օգտագործման պլան: Արտադրարարների կայուն օգտագործման (կառավարման) պլանի կազմման, արտադրաշրջանառության սխեմայի մշակման մեթոդական ցուցումները և արտադրարարներից ու խոտհարքներից օգտվելու պայմանագրի օրինակելի ձևերը սահմանված են «Արտադրարարների ու խոտհարքների կայուն

		կառավարման պլանների կազմման և իրականացման» ուղեցույցում:
3	ՀՀ օրենսդրությամբ, արտոնների կառավարման գործընթացների կազմակերպման նպատակով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների շրջանակում ընդունվող որոշումների շրջանակը	<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի կարգավորումների շրջանակում, համայնքի ղեկավարը՝ առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն համայնքի սեփականություն հանդիսացող արտոնավայրը կամ խոտհարքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին: Համայնքի կողմից պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոնավայրը կամ խոտհարքը օտարելիս՝ ընդունվում է ավագանու որոշում, որով համապատասխան հողամասը դրվում է հրապարակային սակարկությունների ձևով՝ աճուրդով օտարման: Նույն կարգով իրականացվում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոնավայրերի և խոտհարքների վարձակալության տրամադրումը, նախապես հայտարարված մրցույթի միջոցով: Համայնքի ավագանու որոշման հիման վրա օտարված կամ օգտագործման տրամադրված արտոնավայրի կամ խոտհարքի մասով՝ համայնքի ղեկավարը կնքում է համապատասխան պայմանագիրը: Համայնքի ղեկավարը մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի, այդ թվում՝ համայնքային սեփականություն հանդիսացող և համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արտոնավայրերի և խոտհարքների կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը: Համայնքի ավագանին համապատասխան որոշմամբ ընդունում է հնգամյա զարգացման ծրագիրը: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի կարգավորումների համադրությամբ, համայնքի ղեկավարը համապատասխան որոշմամբ՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, այդ թվում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոնավայրերը և խոտհարքները, դրանց ենթակառուցվածքները, ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոնավայրը կամ խոտհարքը օտարելու դեպքերում, համայնքի ղեկավարը համապատասխան որոշմամբ պետք է փոփոխություն կատարի պարտադիր գույքագրման փաստաթղթում և այն ներկայացնի ավագանու հաստատմանը: ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշման <<Ընդհանուր դրույթներ>> բաժնի 3-րդ կետի կարգավորումների

	համաձայն, համայնքի ղեկավարը մինչև արտոնավայրերի օգտագործումը, կազմում է արտոնավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արտոնավայրերի բերքավորությունը: Այդ պլանը հաստատվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
	Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներ ընդգրկող հողամասը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար համայնքի ավագանին՝ իր որոշմամբ ստեղծում է մրցույթային հանձնաժողով:
	Մրցույթի վերաբերյալ համայնքի աշխատակազմի կողմից կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի և մրցույթում հաղթած անձի միջև կնքվում է արտոնավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագիր:
	Համայնքի սեփականություն հանդիսացող արտոնավայրերի կամ խոտհարքների փոխանակման դեպքում՝ համայնքի ղեկավարը ընդունում է որոշում, որը վավերացնում է համայնքի ավագանին՝ համայնքի հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: Այս հնարավորությունը չի տարածվում պետական սեփականություն հանդիսացող արտոնավայրերի և խոտհարքների վրա, այն իրականացվում է կառավարության սահմանած կարգով՝ լիազոր մարմնի որոշմամբ:

1.4. Արոտների կայուն կառավարման գործընթացներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և որոշումների կայացման շրջանակը

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ համայնքի գույքի կառավարումը սահմանվել է որպես համայնքի պարտադիր խնդիր: Նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի կարգավորումների համաձայն, համայնքի ղեկավարը՝ առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին: Նշվածից հետևում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արտոնավայրերի և խոտհարքների օգտագործման տրամադրելու կամ օտարելու նախաձեռնության իրավունքը վերապահված է համայնքի ղեկավարին:

Համայնքի ավագանին՝ ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին: Այսինքն՝ վերջին հաշվով, համայնքային սեփականություն և պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման տրամադրելու կամ օտարելու որոշում կայացնողը համարվում է ավագանին:

Ավագանու կողմից ընդունվող արոտավայրի կամ խոտհարքի օտարման կամ օգտագործման տրամադրման որոշման մեջ պետք է նշվեն՝

- օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը.
- ժամկետները.
- նպատակը.
- օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը.
- հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը:

Համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված կարգավորումների համատեքստում, համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի կամ պետական սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը՝ համայնքի անունից օտարման (վաճառքի), վարձակալության կամ անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու միջոցով:

Անհրաժեշտ է արձանագրել, որ բացի համայնքի ղեկավարից և ավագանուց, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարման գործընթացներում իր մասնակցությունն ունի նաև բազմաբնակավայր (խոշորացված) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարը: Այսպես՝ համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6.2-րդ կետի՝ վարչական ղեկավարը

առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ:

Վերը մեջբերված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արտաավայրերի և խոտհարքների օտարման կամ օգտագործման տրամադրման մասով, բնակավայրի վարչական ղեկավարը իրավունք ունի առաջարկություն ներկայացնել համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարն էլ իր հերթին՝ համայնքի ավագանուն:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները հողօգտագործման բնագավառում: Համաձայն մեջբերված հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ համայնքի ղեկավարը մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման **ամենամյա և հնգամյա ծրագրերը**, որոնք կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը:

Վերը մեջբերված լիազորությունը, համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառավարման տեսանկյունից էական մեծ նշանակություն ունեցող փաստաթղթի մշակում և հաստատում է ենթադրում: Իրավակիրառական պրակտիկայում, համայնքների գերակշիռ մասում, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման թե՛ ամենամյա և թե՛ հնգամյա ծրագրերը չեն մշակվում և չեն հաստատվում ավագանիների կողմից: Հողերի կառավարման ամենամյա և հնգամյա զարգացման ծրագրերում պետք է ներառվեն ինչպես համայնքի սեփականություն հանդիսացող արտաավայրերն ու խոտհարքները, այնպես էլ համայնքի կառավարմանը հանձնված՝ պետական սեփականություն հանդիսացող արտաավայրերն ու խոտհարքները:

Արոտների կայուն կառավարման հիմնական գործիքներից մեկը կարող է հանդիսանալ հողերի կառավարման ամենամյա կամ հնգամյա ծրագիրը, որն ի թիվս համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողերի, կալանավորի արոտների և խոտհարքների օգտագործումն, բարելավումն ու կայուն կառավարումը: Ճիշտ է, ՏԻՄ օրենքում նման հստակ ձևակերպում չկա, բայց անխոս արոտների կառավարման պլանները պետք է դիտարկվեն և հանդիսանան այդ ծրագրի մի մասը, քանի որ

համայնքային հողեր հասկացության ներքո են գտնվում նաև համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերն ու խոտհարքները:

Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, որպես մեթոդական ցուցում, մշակել ՀՀ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը հաստատելու մասին>> ավագանու որոշման օրինակելի ձև և ի ղեկավարումն տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին:

Միաժամանակ, կարևորության են արժանի ՀՀ տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի մեկ այլ՝ 77-րդ հոդվածի կարգավորումները: Այս հոդվածով սահմանվում են համայնքի սեփականության հետ կապված իրավահարաբերությունները, որի 3-րդ մասը սահմանում է, որ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:

Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում: Այսինքն՝ եթե համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օտարվում է համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը, ապա համայնքի ղեկավարը պետք է գույքագրման փաստաթղթում կատարի համապատասխան փոփոխությունը և ներկայացնի այն ավագանու հաստատմանը:

Փաստորեն, բացի հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրեր մշակելու պարտավորությունից, օրենքով՝ համայնքի ղեկավարը պետք է ամենամյա պարտադիր գույքագրման ենթարկի համայնքի սեփականություն հանդիսացող ամբողջ գույքը, այդ թվում՝ հողերը:

Այս կարգավորումից հետևում է, որ համայնքի ղեկավարի կողմից պարտադիր գույքագրման են ենթակա նաև համայնքային սեփականություն համարվող արոտավայրերն ու խոտհարքները, այդ թվում՝ համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերն ու խոտհարքները, որի արդյունքում համայնքը կունենա կառավարման համար անհրաժեշտ փաստաթուղթ և

հնարավորություն կունենա հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը մշակել պատշաճ կարգով և պլանավորված հիմունքներով:

Հարկ է նկատել, որ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա պարտադիր գույքագրումը իրավակիրառական պրակտիկայում պատշաճ չի իրականացվում, որի համար առկա են ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ պատճառներ: Սուբյեկտիվ տեսանկյունից համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կամքի ու ցանկության բացակայությունն է, թեկուզ ազատ ձևաչափով այդ փաստաթուղթը մշակել, իսկ օբյեկտիվ տեսանկյունից, պետք է արձանագրել, որ բացակայում է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթի ընդունված օրինակելի ձևը, ինչը հաճախ կաշկանդում է համայնքների ղեկավարներին և աշխատակազմերին ինքնուրույն մշակելու այդ ձևաթուղթը: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ համայնքներում, մասնավորապես՝ համայնքների աշխատակազմերում ձևավորված է մի <<մշակույթ>> կամ աշխատելաոճ, երբ օրենքով սահմանված այն լիազորությունները, որոնց իրականացումը բխում է որևէ փաստաթղթի մշակմամբ, իրականացվում են այնքանով, որքանով որ պետական լիազոր մարմինը տրամադրում է այդ փաստաթղթի մշակման մեթոդական ցուցումներն ու դրանցով սահմանված օրինակելի ձևերը:

Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել <<Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա պարտադիր գույքագրման>> փաստաթղթի օրինակելի ձևը և որպես մեթոդական ցուցում տրամադրել Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի ղեկավարումն:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը, ի թիվս այլ կարևոր իրավակարգավորումների, հողերի կառավարման մասով սահմանել է նաև դրանց օտարման սահմանափակումների վերաբերյալ կարգավորումներ: Այսպես՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողերը կարող են օտարվել՝

- ⇒ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին համապատասխան.
- ⇒ հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան.

⇒ համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Վերը մեջբերված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առհասարակ համայնքային սեփականության հողերը, այդ թվում՝ արոտավայրերն ու խոտհարքները չեն կարող օտարվել պատահականության սկզբունքով կամ <<պահի հրամայականով>>: Դա իրենից ենթադրում է խիստ պլանավորված գործընթաց, որը պետք է իր արտացոլումն ունենա համայնքի հողերի կառավարման փաստաթղթերում, մասնավորապես՝ համապատասխանի հողերի օգտագործման սխեմաներով սահմանված նպատակներին և ներառված լինի համայնքի հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերում:

Համայնքի հողի օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները: Այս կարգավորումը նախատեսված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչը վկայում է այն մասին, որ համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օտարման պայմաններում պարտադիր պետք է նշում կատարվի համայնքի առաջնային հետգնման իրավունքի մասին:

Համայնքի ղեկավարը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի՝ պարտավոր է համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն տեղադրել օտարման կամ օգտագործման տրամադրվող պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների ցանկը և առհասարակ՝ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային

ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վարչատարածքային բաժանման ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին:

Վերը մեջբերված իրավակարգավորումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների գործընթացներում բնակիչներին ներգրավելու ամենակարևոր դրույթներից է, ինչը ցույց է տալիս, որ համայնքի հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը մշակելիս և ավագանու հաստատմանը ներկայացնելիս, համայնքի ղեկավարը պետք է կազմակերպի հանրային քննարկումներ և լսումներ, բնակչությանը իրազեկելով համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման և օգտագործման տրամադրման գործընթացների մասին:

1.5. Աղյուսակ 2. Արտոնների կառավարման գործընթացներում բնակչության մասնակցությունը, ՏԻՄ-երի կողմից ընդունվող որոշումների վերաբերյալ հանրային քննարկումները և իրազեկումը

N	Գործընթացի անվանումը	Ընդհանուր օրենսդրական կարգավորումների նկարագրությունը
1	Արտոնների կառավարման գործընթացներում բնակչության մասնակցության օրենսդրական կառուցակարգերը	<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի կարգավորումների համապատասխան, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտադրարկների և խոտհարքների գույքագրման, պլանավորման, օտարման և օգտագործման տրամադրման գործընթացներում ընդունվող որոշումների մասով, համայնքի ղեկավարը պետք է ապահովի բնակչության մասնակցությունը: Համայնքի բնակչության մասնակցությունը արտադրարկների և խոտհարքների կառավարման գործընթացներին իրականացվում է հանրային քննարկումների և հանրային լսումների միջոցով: Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններին անդամակցելու և այդ մարմինների գործունեության շրջանակներում արտադրարկների և խոտհարքների կառավարմանը վերաբերող հարցերի շուրջ նիստեր գումարելու, քննարկումներ կազմակերպելու և

		առաջարկություններ ներկայացնելու միջոցով:
		Արտոտափայրի կամ խոտհարքի օտարման կամ օգտագործման տրամադրման հարցը ավագանու նիստի օրակարգում ներառված լինելու դեպքում՝ ավագանու նիստին մասնակցելու միջոցով:
		Համայնքի պաշտոնական կայքում համապատասխան որոշման նախագծին ծանոթանալու և դրա վերաբերյալ գրավոր կամ օնլայն կարգով առաջարկություններ և առարկություններ ներկայացնելու միջոցով և այլն:
2	Արտոտների կառավարման առնչության ՏԻՄ-երի կողմից ընդունվող որոշումների հանրային քննարկումները և իրազեկումը	Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի (որի բաղկացուցիչ մասն են կազմում համայնքի հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, այդ թվում արտոտափայրերը և խոտհարքները) մշակման ընթացքում, օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարը պարտադիր կազմակերպում է հանրային քննարկումներ և լուսմներ:
		Համայնքի հողերի, այդ թվում համայնքի կառավարմանը հանձնված պետական հողերի ամենամյա և հնգամյա ծրագիրը սահմանող որոշման նախագիծը մշակելիս համայնքի ղեկավարը կազմակերպում է հանրային քննարկումներ:
		Արտոտների կառավարման պլանը մշակելիս համայնքի ղեկավարը կազմակերպում է հանրային լուսմներ կամ քննարկումներ:
		Համայնքի սեփականություն հանդիսացող, ինչպես նաև համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող հողերը, դրանց ենթակառուցվածքները, համայնքի ղեկավարը ենթարկում է պարտադիր գույքագրման և այն տեղադրում է համայնքի պաշտոնական կայք էջում:
		Ինչպես և տեղական ինքնակառավարմանը վերաբերող բոլոր հարցերի դեպքում, այնպես էլ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոտափայրերի և խոտհարքների օտարման կամ օգտագործման տրամադրման որոշումների նախագծերը տեղադրվում են համայնքի պաշտոնական կայք էջում, որպես իրազեկում: Արտոտափայրերի և խոտհարքների մասով հայտարարված աճուրդները և մրցույթները համայնքի ղեկավարի կողմից տեղադրվում են www.azdarar.am կայքում, ինչպես նաև համայնքի պաշտոնական կայքում:

Բացի մեջբերված ենթաօրենսդրական ակտերը ընդունելու պարտավորությունից, համայնքի ղեկավարը պարտավորություններ ունի նաև արոտավայրերի և խոտհարքների օգտագործման գործընթացներում: Մասնավորապես՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշման <<Ընդհանուր դրույթներ>> բաժնի 3-րդ կետի կարգավորումներով, համայնքի ղեկավարը մինչև արոտավայրերի օգտագործումը կազմում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը:

Ի դեպ, հարկ է նկատել, որը վերը մեջբերված կառավարության որոշմամբ համայնքի տեղական ինքնակառավարման մարմնի համար վերապահվել է լիազորություն, մինչդեռ՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի կարգավորումների համատեքստում, տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք, իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար օժտված են օրենքով: Հետևություն՝ արոտավայրերի օգտագործման պլանի մշակումը որպես համայնքի ղեկավարի լիազորություն, պետք է սահմանվի բացառապես օրենքով: (Օրենսդրական խնդրի լուծման վերաբերյալ առաջարկություն տե՛ս փաստաթղթի <<առաջարկություններ>> բաժնում):

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը (բացառությամբ պետական սեփականություն հանդիսացող բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի, բնապահպանական և անտառային հողերի) վարձակալության կամ կառուցապատման իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները:

Վերը մեջբերված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ արոտավայրի կամ խոտհարքի պետական կամ համայնքային սեփականություն լինելու հանգամանքից, դրանց օգտագործման իրավունքը վերապահված է համայնքների ղեկավարներին: Փաստորեն, օրենսդիրը պետական սեփականություն հանդիսացող հողամասերի, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման իրավունքը պատվիրակել է համայնքների ղեկավարներին, ինչը ենթադրում է որ օգտագործման տրամադրման ողջ գործընթացի կազմակերպումը իրականացվում է համայնքների ղեկավարների կողմից:

Ուսումնասիրելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, կարելի է փաստել, որ պետության և համայնքների սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրվում են մրցույթով:

Համայնքի ղեկավարի կողմից արոտավայրը կամ խոտհարքը վարձակալության իրավունքով տրամադրվում է՝

- ✓ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին.
- ✓ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց.
- ✓ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց:

Համայնքի ղեկավարը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները կառավարելիս առաջնորդվում է «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված պահանջներով:

Մեջբերված որոշմամբ ի դեպ, ուժը կորցրած են ճանաչվել Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի 1991 թվականի ապրիլի 16-ի «Բնական արոտների, խոտհարքների և այլ հողատեսքերի վարձակալական վճարումների և օգտագործման կարգի մասին» N 282 և 1997 թվականի դեկտեմբերի 26-ի «Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերից արոտազանգվածների հողատեսքերը վարձակալության հանձնելու մասին» N 610 որոշումները:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնական կերհանդակներ ընդգրկող հողամասը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար համայնքի ավագանին ստեղծում է մրցութային հանձնաժողով:

Համայնքի ավագանու կողմից ստեղծվող մրցութային հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան

մասնագետներ և ավագանու անդամներ: Համայնքի ավագանին մրցութային հանձնաժողով ստեղծելու որոշմամբ հանձնաժողովի կազմից նշանակում է աճուրդավար և արձանագրող: Բացառապես պետական սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը օգտագործման տրամադրելիս, մրցութային հանձնաժողովի կազմում ներառվում է նաև համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչը:

Պետական կամ համայնքային սեփականություն համարվող արոտավայրերի կամ խոտհարքների վարձակալության տրամադրման նպատակով՝ համայնքի ավագանու կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովը սահմանում է մրցույթի պայմանները, որոնք պետք է ներառեն՝

- ⇒ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը.
- ⇒ հողամասի չափը և վարձակալության և (կամ) կառուցապատման ժամկետները.
- ⇒ արոտավայրի կամ խոտհարքի (հողամասի) գտնվելու վայրը, ծածկագիրը, վճարի մեկնարկային չափը.
- ⇒ օգտագործման նպատակը (անասնապահությամբ զբաղվելու պարտադիր պայմանը).
- ⇒ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը.
- ⇒ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պահանջները.
- ⇒ բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի կամ խոտհարքների վարձակալության տրամադրման մրցույթներն անցկացվում են բաց, մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ: Մրցույթները կազմակերպում և անցկացնում են մրցութային հանձնաժողովը:

Մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ <http://www.azdarar.am>, ինչպես նաև համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում հանձնաժողովը տեղեկատվություն է հրապարակում վարձակալությամբ տրամադրվող արոտավայրի կամ խոտհարքի վերաբերյալ տեղեկատվությունը, մրցույթի ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի և հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցույթի պայմանների ու պահանջների, մրցույթի

անցկացման կարգի, ներառյալ՝ մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին: Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը, որն իր մեջ ներառում է տվյալներ մրցույթի անցկացման վայրի, ժամկետի, մասնակիցների և կազմակերպչի, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին: Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:

Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի պաշտոնատար անձի և մրցույթում հաղթած անձի միջև կնքվում է արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագիր: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման: Արոտավայրի կամ խոտհարքի վարձակալը, համայնքի ղեկավարի հետ կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա դիմում է ներկայացնում կադաստրի կոմիտե՝ վարձակալության իրավունքը գրանցելու նպատակով:

Հարկ է արձանագրել, որ պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները վարձակալության տրամադրելիս, համայնքի ղեկավարը պետք է համապատասխան առաջարկը ներկայացնի մարզպետին, ստանա վերջինիս համաձայնությունը և նոր կազմակերպի վարձակալության տրամադրելու գործընթացը:

Ստորև անդրադարձ է կատարվում համայնքի և պետության սեփականությունը հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օտարման գործընթացներին վերաբերող օրենսդրական կարգավորումներին:

ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածը սահմանում է պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերի մասնավորեցումն ու օտարումն իրականացնող լիազոր մարմինները, համաձայն որի, պետության և

համայնքների սեփականությանը պատկանող արտավայրերի և խոտհարքների մասնավորեցումն ու օտարումն իրականացնում են՝ համայնքների վարչական սահմաններում համայնքների ղեկավարները:

Արտավայրի կամ խոտհարքի մասնավորեցումը պետության և համայնքների սեփականության ներքո գտնվող հողերից սեփականության իրավունքով հողամասերի տրամադրումն է քաղաքացիներին և իրավաբանական անձանց:

Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող և քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման (մինչև դրա ժամկետի լրանալը) իրավունքով գտնվող արտավայրերը և խոտհարքները չեն կարող օտարվել համայնքի ղեկավարի կողմից այլ անձի, եթե սահմանված կարգով չի լուծվել համայնքի ղեկավարի և սուբյեկտի միջև կնքված արտավայրի կամ խոտհարքի վարձակալության պայմանագիրը:

Ըստ ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը պետության և համայնքների սեփականության արտավայրերն ու խոտհարքները օտարում է հետևյալ եղանակներով՝

- սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով.
- ուղղակի վաճառելու միջոցով.
- աճուրդով.
- փոխանակությամբ:

Պետական և համայնքի սեփականություն հանդիսացող արտավայրերի և խոտհարքների օտարումն կազմակերպելիս և իրականացնելիս, համայնքի ղեկավարը առաջնորդվում է ՀՀ հողային օրենսգրքի 15-րդ գլխով սահմանված իրավակարգավորումներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ, 35-րդ, 42-րդ, 77-րդ և 80-րդ հոդվածներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ սահմանված կարգն ու պայմանները:

Վերը մեջբերված որոշման 21.7-րդ կետի կարգավորումների համաձայն, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արտավայրը կամ խոտհարքը ինքնուրույն չի կարող օտարվել ՏԻՄ-երի

կողմից անմիջականորեն, այդ մասով առկա է որոշակի սահմանափակում: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ օտարվող արոտավայրը կամ խոտհարքը Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող հողամաս է, ապա հողամասի օտարման վերաբերյալ առաջարկը՝ նախագծի տեսքով, համայնքի ղեկավարը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ սահմանված մարզպետի և (կամ) պետական լիազոր մարմնի (ՏԿԵՆ) համաձայնեցմանը:

Պետության և համայնքների սեփականության արոտավայրերը և խոտհարքները սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության համար: Գյուղատնտեսական գործունեության համար անհատույց տրամադրված արոտավայրերի կամ խոտհարքների օգտագործումն այլ նպատակներով արգելվում է: Արոտավայրերը և խոտհարքները անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել այն համայնքներում, որոնցում ընդգրկված են սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, երկրաշարժից տուժած և լքված բնակավայրեր (ցանկը հաստատում է կառավարությունը):

Հայաստանի Հանրապետությունում բնակվող այն ընտանիքները, որոնք ցանկություն են հայտնում մշտական բնակություն հաստատել վերը թվարկված կատեգորիաների համապատասխանող բնակավայրում, Համայնքի ղեկավարը՝ վերջիններիս անհատույց սեփականության իրավունքով տրամադրում է արոտավայր կամ խոտհարք:

Որևէ սուբյեկտի, պետական սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու համար, համայնքի ղեկավարը իր որոշումը պետք է համաձայնեցնի համայնքի ավագանու հետ, հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Իսկ եթե անհատույց սեփականության իրավունքով տրամադրվող արոտավայրը կամ խոտհարքը համարվում է բացառապես համայնքի սեփականությունը, ապա որոշումը ընդունող հենց համայնքի ավագանին է:

Համայնքի ղեկավարը արոտավայրը կամ խոտհարքը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու վերաբերյալ բնակչությանը տեղեկացնում է տեղեկատվության տարածման միջոցներով, մասնավորապես՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելու միջոցով:

ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանվում են պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքի հետ կապված կարգավորումները: Այս հոդվածով սահմանված կարգավորումների վերլուծության համատեքստում կարելի է արձանագրել, որ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող արոտավայրերի կամ խոտհարքների ուղղակի վաճառքը կատարվում է՝

- ✓ գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով: Ընդլայնման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու հնարավորությունը որոշվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափորոշիչների: Ընդլայնման նպատակով լրացուցիչ օտարվող հողամասի չափը չի կարող գերազանցել սեփականության իրավունքով տրամադրված (ծեռք բերված) հողամասի չափը: Հողամասի ընդլայնման նպատակով կարող է հողամաս տրամադրվել միայն մեկ անգամ:
- ✓ պետության և հասարակության կարիքների օտարման նպատակով, հանրային գերակա շահ ճանաչվելու դեպքերում:

Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների վաճառքը, բացառությամբ ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով:

Արոտավայրի կամ խոտհարքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել.

- ⇒ այդ հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից.
- ⇒ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձրլեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից.
- ⇒ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքներ ունեցող սահմանամերձ բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 30 տոկոսից:

Համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի, խոտհարքների կամ դրանց առանձին հատվածների աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա:

Համայնքի ղեկավարը, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների՝ աճուրդի միջոցով օտարումը կազմակերպում և իրականացնում է հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ հողային օրենսգրքի և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորումները:

Արոտավայրի և (կամ) խոտհարքի աճուրդի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է:

Աճուրդը կազմակերպելու համար համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակում ստեղծում է աճուրդային հանձնաժողով, որի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ: Աճուրդի կազմակերպիչը աճուրդային հանձնաժողով ստեղծելու որոշմամբ հանձնաժողովի կազմից նշանակում է աճուրդավար և արձանագրող:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի՝ կազմակերպիչն աճուրդի անցկացումից մեկ ամիս առաջ մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է սակարկությունների անցկացման տեղը, օրը, ժամը, հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մեկնարկային գինը, նախավճարը, քայլի չափը օգտագործման նպատակը, չափերը, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալները արոտավայրի կամ խոտհարքի որակական հատկանիշները, ինչպես նաև տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը:

Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի կամ խոտհարքի աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր և անձնագիր:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք նախավճարը վճարում են տվյալ հողամասի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և նրանց տրվում է մասնակցի վկայական, ինչպես նաև աճուրդի մասնակցության վճար, որը տվյալ տարվա համար սահմանում է համայնքի ավագանին՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ որպես մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար: Աճուրդի դրված հողամասի քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, և սակարկողը կարող է գինն ավելացնել քայլի չափից ոչ պակաս գումարով:

Եթե արոտավայրի կամ խոտհարքի աճուրդի մասնակիցն՝ աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ:

Աճուրդային հանձնաժողովի կողմից հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Աճուրդն անցկացվում է բաց, որին մասնակցում են հանձնաժողովի անդամները, ինչպես նաև գրանցված անձինք և աճուրդի մասնակից չհամարվող անձինք: Գրանցված անձինք սահմանված կարգով վճարում են մուտքի վճար, որի չափը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը, և աճուրդը սկսվելու պահից 30 րոպե առաջ աճուրդային հանձնաժողովի կողմից գրանցվել են: Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդի գործընթացին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

Աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի արձանագրությունն ստորագրում են աճուրդային հանձնաժողովի անդամները, աճուրդում հաղթող ճանաչված անձը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները: Արձանագրությունը և աճուրդի փաստաթղթերի փաթեթը պահպանվում է համայնքի աշխատակազմում:

Արոտավայրերի և խոտհարքների օտարման գործընթացներում իր տեղն ունի փոխանակման եղանակը, սակայն դա ավելի շատ կիրառելի է այն դեպքերում, երբ արոտավայրի կամ խոտհարքի սեփականատերը կամ ֆիզիկական, կամ իրավաբանական անձն է:

ՀՀ հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ հոդվածների կարգավորման առարկան ցույց է տալիս, որ պետության սեփականությանը պատկանող

արոտավայրերի և խոտհարքների փոխանակությունը կարող է կատարվել կառավարության սահմանած կարգով՝ լիազորված մարմնի միջոցով, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերի կամ խոտհարքների դեպքում՝ համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ՝ հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

Սույն բաժնում արված վերլուծությունները և օրենսդրական նկարագրությունները փաստում են, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների վրա օրենսդրությամբ դրված են արոտների կառավարմանը վերաբերող բազմաթիվ լիազորություններ և գործառույթներ, որոնց իրականացումը իրավակիրառ պրակտիկայում <<մեղմ>> ասած չի ապահովվում:

Ելնելով արոտների կառավարման գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականացման անհրաժեշտությունից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում իրականացված և ընթացքում գտնվող համայնքների միավորման գործընթացի հիմքում դրված սկզբունքները, **առաջարկվում է պիլոտային կարգով, Հայաստանի Հանրապետության բոլոր բազմաբնակավայր (խոշորացված) համայնքների աշխատակազմերում ստեղծել ագրոնոմ (գյուղատնտես) մասնագետի հաստիք:** Նման օրենսդրական փոփոխության կատարումը և գործնականում դրա կիրարկումը հնարավորություն կընձեռի իրականացնել արոտների կայուն կառավարման քաղաքականությունը, միաժամանակ, այն կարող է լուրջ խթան հանդիսանալ համայնքի սեփական եկամուտների ավելացման և այդ կապակցությամբ առաջացող վարչարարության պատշաճ կազմակերպման համար:

1.6. Արոտների կայուն կառավարման գործընթացների իրականացման նկատմամբ վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները

Սույն փաստաթղթում արված վերլուծությունների արդյուքում, կարելի է եզրահանգել, որ արոտների կառավարման գործընթացներում հիմնական դերակատարներն ու պատասխանատուները համարվում են համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, առավելապես՝ համայնքի ղեկավարը:

Բնական կերհանդակներին վերաբերող իրավակարգավորումներ նախատեսված ՀՀ ներպետական օրենսդրության վերլուծության արդյունքում, արոտների

կառավարմանն առնչվող հարցերը որակվում են որպես տեղական ինքնակառավարման հարցեր, հետևաբար արոտների կառավարմանը միտված լիազորություններն ու գործառույթները համարվում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններ և գործառույթներ:

Վերը մեջբերված երկու եզրահանգումները հաշվի առնելով, պետք է արձանագրել, որ արոտների կայուն կառավարման գործընթացների իրականացման նկատմամբ վերահսկվող սուբյեկտները՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն են:

Առաջին հերթին վերահսկողական կառուցակարգերին անդրադառնալիս, անհրաժեշտ է նկատի ունենալ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված վերահսկողության և հսկողության օրենսդրական կարգավորումները: Այսպես՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև, որի հիման վրա <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ավագանուն վերապահել է հետևյալ լիազորությունը.

- վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ:

Տեղական ինքնակառավարման միջազգային և ազգային օրենսդրության կարգորոշումների վերլուծության արդյունքում, կարելի է եզրահանգել, որ համայնքում՝ տեղական ինքնակառավարման բնորոշ բոլոր գործընթացների հիմնական և գլխավոր վերահսկողություն իրականացնող մարմինը համայնքի ավագանին է:

Այլ բան է, իրավակիրառական պրակտիկան, երբ հանդիպում ենք այն փաստի հետ, որ համայնքի ավագանի ունի կայացման ինստիտուցիոնալ և գործնական լուրջ խնդիրներ, որոնք և հնարավորություն չեն տալիս վերջիններիս վստահելու հանրային նշանակության գործընթացների ամբողջական վերահսկումը: Թերևս սա է պատճառը, որ օրենսդիրը՝ օրենքներով սահմանել է տարբեր վերահսկողական և հսկողական գործառույթներ իրականացնող մարմիններ և դրանց վերապահել է բազմաթիվ լիազորություններ:

Այսպես՝ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի 1071 – Ա որոշմամբ, հողօգտագործման ոլորտների նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ կառավարությանը ենթակա

քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:

Այս տեսչական մարմինը իրականացնում է ՀՀ հողային օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված հողօգտագործման ոլորտում պետական վերահսկողությունը: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների մասով:

Տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացնում՝

- ✓ արոտավայրի կամ խոտհարքի նպատակային օգտագործման նկատմամբ.
- ✓ հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.
- ✓ տեղական ինքնակառավարման մարմինների՝ բնական կերհանդակների մասով իրականացվող գործունեության նկատմամբ.

Տեսչական մարմնի ղեկավարն օրենքով սահմանված դեպքերում ու կարգով կարող է տալ պարտադիր կատարման ցուցումներ, նշանակել վարչական տույժեր, ինչպես նաև հաղորդումներ ներկայացնել իրավասու մարմիններ՝ հողային օրենսդրության պահանջները խախտողներին օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ արոտավայրերի և խոտհարքների մասով գործում են բնապահպանական վերահսկողության օրենսդրական մեխանիզմները, սակայն դրանք վերաբերելի են անտառային ֆոնդի տարածքներում գտնվող արոտավայրերին և խոտհարքներին: Այսպես՝ «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանվում են բնապահպանական վերահսկողության հիմնական ուղղությունները: Նշված հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ժգ) ենթակետի համաձայն, անտառային ֆոնդի տարածքներում խոտհնձի, անասունների արածեցման, խոտհարքների և արոտահանդակների օգտագործման կանոնների պահպանումը համարվում է բնապահպանական վերահսկողության ուղղություն:

Անտառային ֆոնդի տարածքներում ընդգրկված արոտավայրերի և խոտհարքների օգտագործման և կառավարման նկատմամբ բնապահպանական վերահսկողություն է իրականացնում բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը: Այդ վերահսկողությունը իրականացվում է տեսչական մարմնի և դրա տարածքային ստորաբաժանումների միջոցով, որոնց

կողմից իրականացվող վերահսկողության նպատակն է ստուգել և վերահսկել բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը անտառային:

Ինչպես և արոտավայրերի ու խոտհարքների, այնպես էլ բոլոր տեսակի հողային իրավահարաբերությունների մասով, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վերահսկողական լիազորություններ ունեն նաև տարածքային կառավարման մարմինները՝ մարզպետարանները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, մարզպետը վերահսկողություն է իրականացնում.

- հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ.
- համայնքների հողերի օգտագործման սխեմաների, գլխավոր հատակագծերի իրականացման նկատմամբ.
- պետական և համայնքային սեփականության հողամասերի տրամադրման, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման, հողերի պահպանության միջոցառումների նկատմամբ.
- մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Փաստորեն, թե՛ տեսչական մարմնի, և թե տարածքային կառավարման մարմնի վերահսկողական գործառույթները միտված են վերահսկելու հողային հարաբերություններում համայնքի ղեկավարի գործունեությունը: Տեսչական մարմնի վերահսկողական լիազորությունները միտված են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև տարածքային կառավարման մարմինների գործունեության նկատմամբ: Այլ է պատկերը, համայնքի ղեկավարի հողային հարաբերությունների շուրջ վերապահված վերահսկողության լիազորությունների մասով: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի, համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում՝

- հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.
- հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ.

- հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ.
- հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.
- հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ:

Թվարկված բոլոր լիազորությունները կիրառելի են արոտավայրերի և խոտհարքների սեփականատերեր համարվող՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար:

Համայնքի ղեկավարը փաստորեն, կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված ղեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Արոտների կայուն կառավարման գործընթացների իրականացման նկատմամբ վերահսկողության մասով իր էական նշանակությունն ունի <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքը, որի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

Համաձայն <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության խնդիրներն են՝

- ⇒ հողային օրենսդրության պահանջների կատարման ապահովումը հողային հարաբերությունների սուբյեկտների կողմից.
- ⇒ հողերի օգտագործման և պահպանման՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների, սահմանափակումների, պարտադիր սերվիտուտների, նորմերի, կանոնների, նորմատիվների պահպանման ապահովումը հողօգտագործողների կողմից.

- ⇒ հողային ֆոնդի նպատակային օգտագործման ապահովումը՝ հողաշինարարական, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, բնակավայրերի գլխավոր հատակագծերին համապատասխան.
- ⇒ պետական և համայնքային սեփականության հողամասերի ինքնակամ օգտագործման և զավթումների կանխարգելման ապահովումը.
- ⇒ հողային պաշարների կառավարման ոլորտում հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումը.
- ⇒ պետական և համայնքային սեփականության հողամասերի օգտագործման վարձավճարների գանձման ապահովումը.
- ⇒ հողի հարկի գանձման ապահովումը.
- ⇒ հողամասերի սահմանանիշերի, գեոդեզիական և այլ հատուկ տեղեկատվական նշանների պահպանության ապահովումը.
- ⇒ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ իրականացնելիս հողի բերրի շերտի պահպանման և օգտագործման ապահովումը.
- ⇒ նոր հողերի յուրացման նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը.
- ⇒ խախտված հողերի վերականգնման, դրանք տնտեսական շրջանառության մեջ ներառելու ապահովումը:

Արտավայրերի և խոտհարքների օգտագործման և կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման ձևերն են.

- ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները.
- ընթացիկ ստուգումները.
- ըստ անհրաժեշտության ստուգումները:

Ստուգումը տեսչական մարմնի, մարզպետի, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի, համայնքների ղեկավարների կողմից իրականացվող գործառույթ է, որով պարզվում է հողային հարաբերությունների սուբյեկտների ծավալած գործունեության համապատասխանությունը հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումներ են համարվում տեսչական մարմնի կողմից մարզպետարաններում կամ տեղական ինքնակառավարման մարմիններում հողերի օգտագործման և կառավարման մասով

իրականացվող ստուգումները: Ընթացիկ են համարվում մարզպետների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող ստուգումները:

Ըստ անհրաժեշտության ստուգումների կազմակերպումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի կամ հաղորդման հիման վրա:

Ստուգման արդյունքում բացահայտված իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով: Այն ենթադրում է, որ եթե ստուգումների ընթացքում, օրինակ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրի կառավարման գործընթացում հայտնաբերվել է վարչարարական բնույթի խախտում, ապա իրավախախտ սուբյեկտի՝ պաշտոնատար անձի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակվում է վարչական տուգանք:

Իսկ եթե ստուգումների արդյունքում, պետական համ համայնքային արտավայրերի և խոտհարքների կառավարման գործընթացներում համայնքային պաշտոնատար անձի (անձանց) գործողություններում հայտնաբերվել են առերևույթ հանցավորության հատկանիշներ, ապա այդ մասին ստուգում իրականացնող մարմինը հաղորդում է ներկայացնում ՀՀ դատախազություն կամ հատուկ քննչական ծառայություն, ենթադրյալ հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու նպատակով:

Արտավայրերի և խոտհարքների օգտագործման մասով ստուգում իրականացնելու լիազորություն ունի համայնքի ղեկավարը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց շրջանում: Այսինքն՝ եթե արտավայրը սեփականության իրավունքով պատկանում է ֆիզիկական անձին և վերջինիս կողմից իրականացվում է ոչ նպատակային նշանակությամբ օգտագործում, ապա համայնքի ղեկավարը իրավասու է վերջինիս ենթարկել վարչական պատասխանատվության:

Արտավայրերի և խոտհարքների օգտագործման և տնօրինման գործընթացներում կատարված վարչական իրավախախտումներն ու վարչական պատասխանատվության միջոցներն են՝

- ✓ Քաղաքացիների կողմից արտավայրը կամ խոտհարքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների նկատմամբ նշանակվում է տուգանք՝ սահմանված

նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100 000 ՀՀ դրամի չափով:

- ✓ Արոտավայրի կամ խոտհարքի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնական փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50 000 ՀՀ դրամ:
- ✓ Հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնական փոփոխությունը չկանխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով՝ 150 000 ՀՀ դրամ:
- ✓ Արոտավայրի կամ խոտհարքի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ 30.000 ՀՀ դրամ, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով՝ 50.000 ՀՀ դրամ:
- ✓ Արոտավայրի կամ խոտհարքի բերրիության և այլ օգտակար հատկությունների պահպանության և վերականգնման սահմանված կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 ՀՀ դրամ:
- ✓ Պետական կամ համայնքային սեփականության արոտավայրերի և խոտհարքների օտարման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով՝ 150. 000 ՀՀ դրամ:
- ✓ Պետական կամ համայնքային սեփականության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման տրամադրելու կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100. 000 ՀՀ դրամ:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարման գործընթացների նկատմամբ վերահսկողություն կազմակերպելու մասով

արժանահավատ և կարևոր է դիտարկել նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված հսկողական գործիքակազմերը:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ գլխով սահմանվում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը:

Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն: Իրավական հսկողությունը սահմանափակվում է բացառապես այդ լիազորությունների իրականացման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականությունը ստուգելով:

Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն: Մասնագիտական հսկողությունը իրականացվում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացման արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու նպատակով:

Արդյունների կառավարման ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ օրենսդրությամբ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին այդ լիազորությունները վերապահվել են որպես սեփական լիազորություններ, հետևաբար այս բնագավառի հարաբերությունների շուրջ կարող է կազմակերպվել և իրականացվել իրավական հսկողություն: Իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը համարվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, որը իրավական հսկողությունը կարող է իրականացնել անմիջականորեն կամ ՏԿԵ նախարարի հանձնարարությամբ մարզպետների միջոցով:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի կառավարման գործընթացներով պայմանավորված համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումները ենթարկվում են իրավական հսկողության՝ ՏԿԵՆ-ի և համապատասխան մարզպետի կողմից: Եթե որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա նախարարությունը կամ

համապատասխան մարզպետը, առաջարկում են այն ընդունած տեղական ինքնակառավարման մարմին, փոփոխել կամ անվավեր ճանաչել: Եթե համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինը իրավական հսկողություն իրականացնող մարմնի կողմից արված առաջարկությունը քսան օրվա ընթացքում չի ընդունում և չի կատարում, ապա ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, կամ համապատասխան մարզպետը դիմում են ՀՀ վարչական դատարան պարտավորեցման հայցապահանջով:

Արոտների կառավարման գործընթացներում, իրավական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հսկողության կազմակերպման և իրականացման ընթացքում հայտնաբերված առերևույթ հանցավոր տարրերի առկայության կամ հայտնաբերման պայմաններում հաղորդում է ներկայացվում իրավապահ մարմիններին, իսկ հնարավոր զանցանքների արձանագրման պայմաններում համապատասխան գրությամբ ՏԿԵ նախարարությունը դիմում է հողերի օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին, քանի որ նախարարությունը համայնքի ղեկավարի կամ այլ պաշտոնատար անձի նկատմամբ վարչական սանկցիա կիրառելու իրավունք չունի:

Հարկ է նկատել, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքով համայնքի ղեկավարին վերապահված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ լիազորությունները չեն մանրամասնում դրանց կիրառման կառուցակարգերը: Արոտօգտագործող կամ տնօրինող սուբյեկտի նկատմամբ վարչական տույժ կիրառելուց առաջ, նախ անհրաժեշտ է բացահայտել այդ հարաբերությունների հետ կապված իրավախախտումները, ինչը օրենսդրորեն ամրագրված չէ և լուրջ իրավակիրառական խնդիր է իրենից ներկայացնում: Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է մշակել մեթոդական ցուցումներ՝ ուղեցույցի տեսքով, որով կսահմանվի համայնքի ղեկավարի կողմից արոտների և խոտհարքների օգտագործող կամ տնօրինող հանդիսացող սուբյեկտների մասով ՀՀ հողային օրենսդրության խախտումները հայտնաբերելու եղանակները, գործիքակազմերը և մեթոդները, ինչպես նաև դրանց հայտնաբերման արդյունքում վարչական տույժեր կիրառելու մեխանիզմները և ընթացակարգը:

Ելնելով վերոգրյալից, կարելի է արձանագրել, որ արոտների կառավարման գործընթացներում թերևս առավել կարգավորված ոլորտը՝ վերահսկողության բնագավառն է, ինչն անկախ կանոնակարգված լինելու փաստից, կարող է գործել անարդյունավետ, եթե բուն արոտների կառավարման գործընթացները կարգավորող օրենսդրությունում առկա են իրավական և իրավակիրառական խնդիրներ:

1.7. Աղյուսակ 3. Արտուրների կառավարման գործընթացների նկարմամբ վերահսկողությունը և դրանից բխող պարասխանարվության շրջանակները

N	Գործողության տեսակը	Իրականացնող կամ կիրառող մարմինը	Գործընթացի ընդհանուր նկարագրությունը
1.	Արտուրների կառավարման գործընթացների նկարմամբ վերահսկողությունը	Համայնքի ավագանի	Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված իր բոլոր լիազորությունների իրականացման նկարմամբ, այդ թվում՝ արտուրների կառավարման բնագավառում սահմանված լիազորությունների իրականացման նկարմամբ:
		ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	ՏԿԵՆ-ը համարվում է ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկարմամբ բարձրագույն իրավական հսկողություն իրականացնող լիազոր մարմինը: ՏԿԵՆ-ը իրավական հսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու սեփական լիազորությունների, այդ թվում՝ արտուրների կառավարմանը վերաբերող լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումների նկարմամբ: Իրավական հսկողությունը սահմանափակվում է բացառապես ընդունված որոշումների օրինականությունը ստուգելով:
		ՀՀ կառավարությանը ենթակա քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	Տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացնում ⇒ արտուրավայրի կամ խտրհարքի նպատակային օգտագործման նկարմամբ ⇒ հողային օրենսդրության պահանջների պահպանման նկարմամբ ⇒ տեղական ինքնակառավարման մարմինների բնական կերհանդակների մասով իրականացվող գործունեության նկարմամբ:
		ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	Արտուրավայրերի և խտրհարքների մասով գործում են բնապահպանական վերահսկողության օրենսդրական մեխանիզմները, սակայն դրանք վերաբերելի են անտառային ֆոնդի տարածքներում գտնվող արտուրավայրերին և խտրհարքներին: Այդ վերահսկողությունը իրականացվում է տեսչական մարմնի և դրա տարածքային ստորաբաժանումների

			միջոցով, որոնց կողմից իրականացվող վերահսկողության նպատակն է ստուգել և վերահսկել բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը:
		Մարզպետ (մարզպետարան)	Մարզպետը վերահսկողություն է իրականացնում. ▪ հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ. ▪ համայնքների հողերի օգտագործման սխեմաների, գլխավոր հատակագծերի իրականացման նկատմամբ. ▪ պետական և համայնքային սեփականության արտադրարժեքների և խոտհարքների տրամադրման, հեղուկացման, հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման, հողերի պահպանության միջոցառումների նկատմամբ. ▪ մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:
		Համայնքի ղեկավար	Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում ⇒ հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ. ⇒ արտադրարժեքների և խոտհարքները ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ. ⇒ արտադրարժեքների և խոտհարքների սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ. ⇒ հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ. ⇒ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ: Թվարկված բոլոր լիազորությունները կիրառելի են արտադրարժեքների և խոտհարքների սեփականատերեր համարվող ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար:

			Համայնքի ղեկավարը ֆիզիկական և իրավաբանական անձանց շրջանում, կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի արտաօգտագործումը համայնքի վարչական սահմաններում:
3.	Արտյունքի կառավարման գործընթացների նկատմամբ վերահսկողությունից բխող պատասխանատվության շրջանակը	ՀՀ կառավարությանը ենթակա քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	Տեսչական մարմնի ղեկավարն օրենքով սահմանված դեպքերում ու կարգով, համայնքի ղեկավարին և համայնքի աշխատակազմի պաշտոնատար անձանց կարող է տալ պարտադիր կատարման ցուցումներ, նշանակել վարչական տույժեր, ինչպես նաև հաղորդումներ ներկայացնել իրավասու մարմիններին հողային օրենսդրության պահանջները խախտողներին օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:
		ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	Վերահսկողության արդյունքներով պայմանավորված՝ իրավախախտ սուբյեկտների նկատմամբ կարող են նշանակվել վարչական տույժեր, ինչպես նաև հաղորդումներ ներկայացվել համապատասխան իրավասու մարմիններին:
		Մարզպետ (մարզպետարան)	Մարզպետը՝ - պետական կամ համայնքային սեփականության արտադրարժեքի և խտրհարքների օգտարման կարգը խախտելու դեպքում համայնքի ղեկավարի նկատմամբ նշանակում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հիսնապատիկի չափով՝ 150. 000 ՀՀ դրամ: - արտադրարժեքի կամ խտրհարքի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելու դեպքում նշանակում է տուգանք՝ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով՝ 50.000 ՀՀ դրամ: - արտադրարժեքը կամ խտրհարքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը համայնքի ղեկավարի կողմից չկանխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով՝ 150 000 ՀՀ

		դրամ:
	ՀՀ տարածքային կառավարմա և ենթակառուցվածքների նախարարություն	ՏԿԵՆ-ը իրավական հսկողություն է իրականացնում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտոնարարների և խտրհարքների օգտագործման տրամադրման և օտարման կապակցությամբ համայնքների ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումների նկատմամբ: Օրենսդրությանը հակասող որոշումների պարագայում՝ ՏԿԵՆ-ը առաջարկում է ՏԻՄ-երին փոփոխել կամ անվավեր ճանաչել ընդունված որոշումը: 20-օրյա ժամկետում ՏԻՄ-երի կողմից ՏԿԵՆ-ի առաջարկությունը չընդունվելու դեպքում, ՏԿԵՆ-ը դիմում է ՀՀ վարչական դատարան՝ պարտավորեցման հայցով:
	Համայնքի ղեկավարը	Ֆիզիկական և իրավաբանական անձանց շրջանում պատրաստանալության տեսակներն են՝ ▪ Քաղաքացիների կողմից արտոնարարը կամ խտրհարքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների նկատմամբ նշանակվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100 000 ՀՀ դրամի չափով: ▪ Արտոնարարի կամ խտրհարքի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50 000 ՀՀ դրամ: ▪ Արտոնարարի կամ խտրհարքի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ 30.000 ՀՀ դրամ: ▪ Արտոնարարի կամ խտրհարքի բերրիության և այլ օգտակար հատկությունների պահպանության և վերականգնման սահմանված կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 ՀՀ դրամ:

1.8. Արտոգտագործողների կոոպերատիվները և դրանց գործունեությունը կարգավորող ինստիտուցիոնալ կառուցակարգերը

Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման, մրցունակության բարձրացման տեսանկյունից, առանձնահատուկ կարևորվում է գյուղատնտեսությունում տնտեսվարողների համատեղ գործունեությունը, մասնավորապես՝ կոոպերատիվների ձևավորման միջոցով:

Կոոպերացիայի խթանման քաղաքականությունն ագրարային ոլորտում վարվող պետական քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից է: Վերջինիս մասին են վկայում գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության հիմքում դրված մի շարք ուղենշային ծրագրային փաստաթղթերը: Դրանցից են՝

- ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագիրը.
- ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը.
- 2019 թվականի դեկտեմբերի 19-ի կառավարության N 1886-Լ որոշմամբ հաստատված ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը և այլն:

Կոոպերատիվների գործունեության հիմնական ուղղություններն են՝ բուսաբուծությունը, անասնաբուծությունը, խառը գյուղատնտեսությունը, պտղաբուծությունը, բանջարաբուծությունը, հացահատիկային մշակաբույսերի աճեցումը, կաթի մթերումը ու հավաքագրումը, մեղվաբուծությունը, գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով ծառայությունների մատուցումը, ինչպես նաև արտավայրերի կառավարում:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայք էջում տեղադրված տեղեկատվության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում հիմնվել են թվով 189 «Արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնց գործունեության հիմնական նպատակն է արտավայրերի կառավարման և բարելավման միջոցով բարձրացնել

անասնապահության արդյունավետությունը՝ անասնապահական տնտեսությունների եկամուտները:

Արոտագտագործողների կոոպերատիվների ստեղծման համար օրենսդրական նախադրյալներ են սահմանում սպառողական կոոպերատիվի դեպքում՝ «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, իսկ գյուղատնտեսական կոոպերատիվի դեպքում՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Հարկ է նկատել, որ կոնկրետ արոտագտագործողների կոոպերատիվների մասով ՀՀ ներպետական օրենսդրությունը տարանջատում և կարգավորում չի նախատեսել, սակայն գործող ՀՀ Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը սահմանում է ընդհանրական կարգավորումներ, մասնավորապես՝ այդ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսվում է գյուղատնտեսական կոոպերատիվ ստեղծել անասնաբուծության, բույսերի պաշտպանության, տոհմային գործի, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, անասնաբուժական բնույթի ծառայությունների մատուցման նպատակներով:

Չնայած այն հանգամանքին, որ վերը մեջբերված օրենքը, արոտագտագործման մասով հստակ կարգավորումներ չի նախատեսել, այնուհանդերձ տալիս է արոտագտագործողների կոոպերատիվ ստեղծելու հնարավորությունը: Միաժամանակ, հարկ է նկատել նաև, որ գործում է ՀՀ «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը, որը ևս արոտագտագործողների միություն ստեղծելու վերաբերյալ ուղղակի կարգավորում չի սահմանում, բայց և չի էլ արգելում: Արժանահավատ է դիտարկել այն փաստը, որ Հայաստանում ստեղծված և գործունեություն իրականացնող արոտագտագործողների կոոպերատիվները ստեղծվել են, որպես սպառողական կոոպերատիվներ:

Այնուհանդերձ հարկ է արձանագրել, որ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների մասով, տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենսդրությունը արոտագտագործման կոոպերատիվներ կամ միավորումներ ստեղծելու վերաբերյալ կարգավորումներ չի նախատեսել: Ըստ էության, համայնքը ևս կարող է դառնալ արոտագտագործողների միավորման կամ կոոպերատիվի անդամ, սակայն առավել իրավաչափ և ողջամիտ կլիներ օրենքով համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին նման

իրավասությամբ օժտելը: Այս իմաստով, հարկ է ուշադրություն դարձնել նաև այն փաստի վրա, որ Հայաստանում գործում է <<Միջհամայնքային միավորումների մասին>> ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան որևէ կերպ չի սահմանափակում համայնքների ՏԻՄ-երին ստեղծելու արոտօգտագործման կամ արոտների կառավարման միջհամայնքային միավորումներ:

Չնայած այն հանգամանքին, որ վերը մեջբերված օրենքը արդեն երկու տարի է ինչ ընդունվել է, սակայն Հայաստանում դեռևս որևէ միջհամայնքային միավորում չի ստեղծվել: Իրավացիորեն կարելի է պնդել, որ արոտօգտագործման կամ արոտների կառավարման նպատակները կարող են հիմք հանդիսանալ համայնքների համար, միջհամայնքային միավորում ձևավորելու և այդ միջհամայնքային միավորման մարմիններին՝ արոտների օգտագործման և կառավարման ոլորտների լիազորությունները փոխանցելու:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, արոտօգտագործման և արոտների կառավարման նպատակներով, պիլոտային կարգով նախապես ընտրված մի քանի համայնքների միջև նախաձեռնել միջհամայնքային միավորում ստեղծելու գործընթաց: Միջհամայնքային նման միավորում ստեղծելով հնարավորություն կընձեռվի ոչ միայն միասնական ուժերով արոտների կայուն կառավարում իրականացնել, այլև նախադեպ ստեղծել՝ <<Միջհամայնքային միավորումների մասին>> ՀՀ օրենքի հիման վրա Հայաստանում առաջին միջհամայնքային միավորման ձևավորման համար:

1.9. Արոտների կայուն կառավարման գործընթացների կազմակերպմանը և իրականացմանը աջակցելու նպատակով մշակված ուղեցույցները

Հայաստանի Հանրապետության իրավակիրառական պրակտիկայում ընդունված է, որ որոշակի խումբ իրավահարաբերություններ ենթադրող բնագավառներում, օրենսդրության պահանջների պատշաճ իրագործման նպատակով մշակվեն ուղեցույցներ և տրամադրվեն այն սուբյեկտներին, որոնց օրենքով վերապահված են համապատասխան լիազորությունները:

Արոտների կայուն կառավարման գործընթացները համալիր իրավահարաբերություններ ենթադրող գործընթացներ են, որոնց կարգավորման

առնչությամբ ՀՀ բազմաթիվ օրենսդրական ակտերով սահմանված են տարաբնույթ կարգավորումներ: Հատկանշական է այն հանգամանքը, որ արոտների կառավարման հետ կապված հիմնական դերակատարները Հայաստանի Հանրապետությունում համարվում են համայնքների ՏԻՄ-երը, որոնք, գործնականում մշտապես ունեն ուղեցույցներից օգտվելու կարիքն ու անհրաժեշտությունը:

Արոտների կայուն կառավարման գործընթացների կազմակերպման և իրականացման աջակցմանը միտված ուղեցույցները իրենց ուրույն դերն ու նշանակությունը ունեն այս ոլորտում իրականացվող քաղաքականության առումով, մասնավորապես՝ հիմնական դերակատարների, համայնքների ՏԻՄ-երի մասնագիտական և վարչարարական կարողություններն ու հմտությունները զարգացնելու և հզորացնելու մասով:

Արոտների կառավարման ոլորտում ԳՄՀԸ <<Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում, Հարավային Կովկաս>> ծրագրի շրջանակներում մշակված ուղեցույցներն են.

- ⇒ Արոտավայրերի ու խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույցը.
- ⇒ Արոտային ենթակառուցվածքների շահագործման և սպասարկման կանոններ սահմանող ուղեցույցը.
- ⇒ Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկը.
- ⇒ Դեգրադացված բնական կերհանդակների (արոտավայրերի և խոտհարքների) բարելավման ուղեցույցը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների կազմակերպման և իրականացման առնչությամբ մշակված ուղեցույցները կրում են խորհրդատվական բնույթ: Տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող օրենսդրությունը մեթոդական ուղեցույցը դիտարկում է, որպես մեթոդական ցուցում, որն չունի իմպերատիվ կիրառության նշանակություն: Այնուհանդերձ, իրավակիրառական պրակտիկայում մեծ է ուղեցույցների նշանակությունը, առավելապես՝ համայնքային մակարդակում:

Համայնքների աշխատակազմերի ցածր կարողությունները, մարդային մասնագիտական ռեսուրսների պակասը հնարավորություն չեն ընձեռում համայնքների ՏԻՄ-երին ամբողջությամբ և պատշաճ ձևով իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորությունները: Արոտների կառավարման ոլորտը անմասն չէ

տեղական ինքնակառավարման համակարգի մասը կազմող այլ ոլորտներից, հետևաբար այս բնագավառում մշակված և համայնքներին տարամադրված ուղեցույցները իրապես իրենց առանձնակի նշանակությունն ունեն և ունենալու են համայնքների ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի համար:

Ստորև առանձին-առանձին, համալիր կարգով ներկայացվում են արոտների կայուն կառավարման գործընթացների կազմակերպման աջակցմանը միտված թվով 4 ուղեցույցների կարգավորման ուղղությունները, նպատակները և հակիրճ բովանդակությունը.

Արոտավայրերի ու խոտհարքների կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման ուղեցույցը: Այս ուղեցույցի նպատակն է սահմանել Հայաստանի բնական արոտավայրերի կայուն կառավարման կարգերի ու ծրագրերի մշակման ընթացակարգերը: Ուղեցույցի հիմքում ընկած են գիտական հիմնավոր մոտեցումները: Ուղեցույցում ներկայացված են արոտավայրերի և խոտհարքների կառավարման գործառույթի անհրաժեշտ միջոցառումներն ու գործելաձևերը: Ուղեցույցում ներառված մեթոդաբանությամբ արոտների կայուն կառավարման ծրագրերի մշակումն և արդյունավետ օգտագործման կազմակերպումը հնարավորություններ կձևավորի՝ լուծելու ոչ միայն բնական արոտների պահպանման, վերականգնման և արդյունավետացման խնդիրները, այլև էապես կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը, ընդհանուր կենսաբազմազանության խոցելիության ռիսկերի կրճատմանը, էկոհամակարգերի բնականոն զարգացմանը, ինչպես նաև կերարտադրության համակարգի բարելավմանն ու անասնապահական մթերքների արտադրության ծավալների մեծացմանը:

Արոտային ենթակառուցվածքների շահագործման և սպասարկման կանոններ սահմանող ուղեցույցը: Ուղեցույցը մշակվել է արոտային տարածքներում գոյություն ունեցող յուրաքանչյուր շահագործվող շինության խնամքի, վերանորոգման ու պահպանման նպատակով: Ուղեցույցով սահմանվում են.

- ✓ Ջրախմոցի սպասարկման և խնամքի աշխատանքները.
- ✓ Մակատեղի սպասարկման և խնամքի աշխատանքները.
- ✓ Հովվի կացարանի սպասարկման և խնամքի աշխատանքները:

Վերը մեջբերված երեք բաղադրիչներով աշխատանքների իրականացումը սահմանված է ըստ արոտային շրջանի սկզբի, արոտային շրջանի ընթացքի և արոտային շրջանի ավարտի առանձնահատկությունների:

Արոտավայրերի մշտադիտարկման ձեռնարկը: Այս ձեռնարկի նպատակն է Հայաստանի արոտավայրերի վիճակի բազմակողմանի և օբեկտիվ մշտադիտարկման կազմակերպումը՝ հիմք ընդունելով գիտական հիմնավոր մոտեցումները: Ձեռնարկում նաև արվել են արոտավայրերի կայուն օգտագործմանը (կառավարմանը) ուղղված հիմնավոր առաջարկներ, որոնք հնարավորություն կընձեռեն ոչ միայն բարձրացնել արոտավայրերի արդյունավետությունը ու դրանով պայմանավորված անասնապահական մթերքների արտադրության ավելացումը, այլև էապես կնպաստեն բնական կերհանդակների պահպանմանը, վերականգնմանը, կենսաբազմազանության խոցելիության կրճատմանը ինչպես նաև բնական համակեցությունների և էկոհամակարգերի կայուն զարգացման ապահովմանն ապագայում: Ձեռնարկում ներկայացվել են արոտավայրերի դեգրադացիայի հասկացությունը, արոտավայրերի վիճակի մշտադիտարկման հետ կապված գործողությունները, նկարագրվել են մշտադիտարկման հետ կապված խնդիրները, արոտավայրերի կառավարման գնահատումը, արոտավայրի իրական արդյունավետության որոշման կարգը, արոտների բարելավված (կայուն) կառավարման իրականացումը և այլն:

Դեգրադացված բնական կերհանդակների (արոտավայրերի և խոտհարքների) բարելավման ուղեցույցը: Այս ուղեցույցի նպատակն է Հայաստանի դեգրադացված և կազմալուծված բնական կերային հանդակների (խոտհարքների և արոտավայրերի) վերականգնման և բարելավման նպատակով համալիր միջոցառումների մշակումը: Ուղեցույցն անդրադառնում է դեգրադացված բնական կերային հանդակների բարելավմանը միտված հիմնավոր մեթոդաբանությամբ միջոցառումների պլանավորման և իրականացման գործընթացներին: Որպես արդյունք, սահմանվել է, որ ուղեցույցը կարող է ծառայել որպես ընդհանրական ուղեցույց դեգրադացված լանդշաֆտներում վերականգնողական միջոցառումներ նախագծելու, մշակելու և բարելավման աշխատանքներ իրականացնելու համար, ինչը էապես կնպաստի կերային հանդակների արտադրողականության և որակական ցուցանիշների բարելավմանը, դեգրադացված էկոհամակարգերի վերականգնմանը, ինչպես նաև արոտամարգագետնային կերարտադրության համակարգի բարելավմանը:

Ուղեցույցով սահմանվել են.

- ⇒ Բնական կերհանդակների բնութագիրը և կարևորությունը.
- ⇒ Դեգրադացիան բնական կերհանդակներում, դրա ձևավորման պատճառներն ու նպաստող գործոնները.

- ⇒ Արոտային և խոտհարքային էկոհամակարգերից տրամադրվող ծառայությունների պահպանման և վերականգնման կարևորությունը.
- ⇒ Դեգրադացված արոտավայրերի և խոտհարքների բարելավման եղանակներն ու միջոցառումների բնութագիրը.
- ⇒ Դեգրադացված կերհանդակների մակերեսային և արմատական բարելավման համակարգերը.
- ⇒ Ուղեցույցի մեթոդաբանության կիրառման օրինակները:

Վերը թվարկված ուղեցույցների կարևորությունն ու նշանակությունը հաշվի առնելով, անհրաժեշտ է արձանագրել, որ առկա է իրավահիրացնող խնդիր մշակված ուղեցույցների կիրառության մասով, մասնավորապես՝ բացակայում է արոտների կառավարման գործընթացներում համայնքների ՏԻՄ-երի գործունեության ամբողջական քայլերը ներկայացնող մեթոդական ուղեցույցը, որով ոչ միայն հնարավորություն կստեղծվի նկարագրել ՏԻՄ-երի կառավարչական և գործառնական բնույթի լիազորություններն ու գործառույթները, այլև համապատասխան հղումների կիրառման պայմաններում կխրախուսվի արոտների կայուն կառավարման գործընթացների աջակցման նպատակով մշակված ուղեցույցների կիրառությունը, դրանով հիմքեր և նախադրյալներ ստեղծելով արոտների կառավարման քաղաքականության իրագործման համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն փաստաթղթում կատարված իրավական և իրավակիրառական վերլուծությունների արդյունքերով պայմանավորված եզրահանգումներն են.

- Հայաստանի Հանրապետությունում առկա չէ մեկ միասնական օրենսդրական ակտ, որով համալիր կարգով սահմանվեն արոտավայրերի և խոտհարքների կառավարման հետ կապված իրավահարաբերությունները:
- Արոտների և խոտհարքների օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները սահմանող երկու ենթաօրենսդրական ակտերը ամբողջությամբ չեն կարգավորում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:
- Արոտավայրերի և խոտհարքների կառավարման հաջորդ բաղադրիչի՝ օտարման հետ կապված կարգավորումները սահմանվում են ՀՀ

կառավարության կողմից ընդունված մեկ որոշման շրջանակում, որն վերաբերելի է առհասարակ բոլոր տեսակի համայնքային հողերի օտարման գործընթացներին:

- <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում բացակայում են արոտների կառավարմանը առնչվող իրավակարգավորումները:
- <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով համայնքի ՏԻՄ-երի համար արոտների կառավարման մասով լիազորությունների սահմանման բացակայությունը առաջացնում է ինստիտուցիոնալ իրավակիրառական <<ճգնաժամ>> համայնքային մակարդակում որոշումների կայացման տեսանկյունից:
- Արոտավայրերի կառավարման պլանները ընդգրկված չեն համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերում:
- Համայնքների ավագանիների կողմից չկան ընդունված համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը՝ այդ որոշման օրինակելի ձևի բացակայությամբ պայմանավորված:
- Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պարտադիր գույքագրման փաստաթղթերում ներառված չեն համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները, ինչպես նաև դրանց ենթակառուցվածքները:
- Արոտագործման համար ենթաօրենսդրական ակտով սահմանված վճարի առավելագույն չափը, որևէ կերպ չի խրախուսում համայնքի ՏԻՄ-երին համայնքի սեփական եկամուտների ավելացման և արոտների կառավարման նկատմամբ շահագրգռվածության ավելացման մասերով:
- Համայնքների աշխատակազմերում գյուղատնտես մասնագետի հաստիքի բացակայությունը խնդրահարույց է դարձնում համայնքներում արոտների կառավարման հետ կապված գործընթացների պատշաճ կազմակերպումն ու իրականացումը:
- Հայաստանի Հանրապետություն իրականացված և դեռևս ընթացքում գտնվող վարչատարածքային բարեփոխումների (համայնքների խոշորացման) ընթացքում և այս պահին, տեղական ինքնակառավարման բոլոր ոլորտներում առկա է միատեսակ օրենսդրություն, այսինքն՝ թե՛ միավորված և թե՛ դեռևս չմիավորված համայնքների ՏԻՄ-երի համար

նախատեսված է օրենսդրությամբ նույն կարգավորումները: Անհրաժեշտ է արձանագրել, որ արոտների կառավարման բնագավառում սույն փաստաթղթում և այլ հայեցակարգային բնույթ կրող փաստաթղթերում արված առաջարկությունները վերջնական չեն, որևէ կերպ հնարավոր չէ բացառել, որ համայնքների միավորման գործընթացի շարունակությամբ պայմանավորված, մեկ տարի անց անհրաժեշտություն չի առաջանա փոփոխությունները և վերադասավորումներ կատարելու բնական կերհանդակների կառավարման հարաբերությունները սահմանող իրավանորմերում:

Սույն փաստաթղթում կատարված վերլուծությունները և վերը թվարկված եզրահանգումները հաշվի առնելով, կարելի է արձանագրել, որ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարման մասով առկա են էական իրավական և օրենսդրական խնդիրներ, որոնք ենթադրում են հետևյալ ուղղություններով քաղաքականության մշակում և աշխատանքների իրագործում.

- ⇒ Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական կարգավորումների հստակեցում և սահմանում.
- ⇒ Տեղական ինքնակառավարման մարմինների համար օրենքով, մասնավորապես՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով լիազորությունների սահմանում.
- ⇒ Արոտների և խոտհարքների կառավարմանը միտված ենթաօրենսդրական ակտերի մշակումը՝ տեղական մակարդակում.
- ⇒ Համայնքային մակարդակում մարդկային ռեսուրսների ձևավորում և կարողությունների զարգացում.
- ⇒ Արոտների կառավարման գործընթացներում բնակչության մասնակցության խրախուսում և ներգրավում.

Արոտների կառավարման բաղադրիչը որպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և համայնքի տարեկան աշխատանքային պլանի մի մաս ճանաչելը և դրանցում ներառելը և այլն:**Արոտների կայուն կառավարման բնագավառում առկա օրենսդրական խնդիրներից բխող առաջարկությունները**

Արոտների կայուն կառավարման ինստիտուցիոնալ նկարագրության շրջանակում արված եզրահանգումների հիման վրա, ստորև ներկայացվում են օրենսդրական բնույթի **հետևյալ առաջարկությունները.**

1. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի կարգավորումները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշման «Ընդհանուր դրույթներ» բաժնի 3-րդ կետով համայնքի ղեկավարի համար սահմանված լիազորության հանգամանքը, առաջարկվում է լրացում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝ անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող 50-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով. «3) մինչև արտավայրերի օգտագործումը, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի օգտագործման պլանը»։ Միաժամանակ, ավագանու լիազորությունները սահմանող 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.3-րդ կետով. «41.3) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի օգտագործման պլանը.»։
2. Նպատակ ունենալով ապահովել արոտօգտագործման պայմանագրերի կնքման լիազորության իրականացումը և հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ և 182-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, առաջարկվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով. «օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է արոտօգտագործման և խոտհարքների վարձակալության պայմանագրեր»։
3. Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել արոտօգտագործման և խոտհարքների վարձակալության պայմանագրերի օրինակելի ձևերը և մեթոդական ուղեցույցի տեսքով տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ի ղեկավարումն։
4. Նպատակ ունենալով ապահովել արոտների կառավարման հետ կապված օրենսդրական կարգավորումների պատշաճ իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, միաժամանակ, աշվի առնելով համայնքների միավորման արդյունքում բնակչությանը հանրային բնույթի ծառայությունների առավել հասանելիության ապահովման սկզբունքը,

առաջարկվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. <<3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարման մասով, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառում օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար բազմաբնակավայր համայնքի աշխատակազմում ստեղծվում է ագրոնոմ (գյուղատնտես) մասնագետի հաստիք:>>:

5. Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել բազմաբնակավայր համայնքի աշխատակազմի ագրոնոմ (գյուղատնտես) մասնագետի, որպես համայնքային ծառայողի հաստիքի՝ պաշտոնի անձնագիր և տրամադրել համապատասխան համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ի ղեկավարումն:
6. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անկախ արոտավայրերի և խոտհարքների պետական կամ համայնքային սեփականություն լինելու հանգամանքից, ՀՀ օրենսդրությունը արոտների կառավարման գործընթացների կազմակերպումը և իրականացումը պատվիրակել է համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ և 182-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, առաջարկվում է ՀՀ հողային օրենսգրքում կատարել լրացում, մասնավորապես՝ 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ պարբերությամբ.<<Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանում է համայնքի ավագանին:>>:
7. Առաջարկվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հոդօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետով.«մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանող ավագանու որոշման նախագիծը:»:
- Միաժամանակ, իրավակիրառական համապատասխանությունն ապահովելու նպատակով, առաջարկվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի ավագանու լիազորությունները սահմանող 18-րդ հոդվածի 1-ին մասը

լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.4-րդ կետով. <<41.4) համայնքի ղեկավարի ներկայացմամբ ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին որոշում.>>:

8. Առաջարկվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ, ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետությունում արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը:
9. Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը մշակել համայնքի ավագանու . <<Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> որոշման նախագծի օրինակելի ձև: Ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևով սահմանել՝ պետական և համայնքային սեփականության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման հետ կապված ընթացակարգային կարգավորումները, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները, ժամկետները, ընդունվելիք որոշումների տեսակները և շրջանակը: Առաջարկվում է, այն որպես մեթոդական ցուցում, ՏԿԵ նախարարի հանձնարարականով՝ համապատասխան ժամկետի սահմանմամբ, տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ի ղեկավարումն:
10. Առաջարկվում է փոփոխություն և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշման մեջ, մասնավորապես՝ որոշման 1-ին կետում լրացնել <<և համայնքային>> բառերը, իսկ արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրերի օրինակելի ձևերը համապատասխանեցնել նաև համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման գործընթացների առանձնահատկություններին:
11. Առաջարկվում է մշակել և ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը <<Խոտհնձի և անասունների արածեցման համար քաղաքացիներին և իրավաբանական անձանց հողամասեր տրամադրելու կարգը սահմանելու մասին>>: Միաժամանակ, հաշվի առնելով

դեռևս խորհրդային ժամանակաշրջանում ԽՍՀՄ Մինիստրների Սովետի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտի ուժի մեջ գտնվելու կարգավիճակը, առաջարկվում է մշակել և ընդունել ՀՀ կառավարության որոշման նախագիծ <<Հայաստանի Հանրապետության անտառներում խոտինձի և անասունների արածեցման կարգը սահմանելու մասին>>:

12. Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի կարգավորումները, որի համատեքստում իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինը՝ ՀՀ ՏԿԵՆ-ը, խորհրդատվություններ, պարզաբանումներ և մեթոդական աջակցություն է ցուցաբերում համայնքների ՏԻՄ-երին, առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից, որպես մեթոդական ցուցում մշակվի <<Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը հաստատելու մասին>> ավագանու որոշման օրինակելի ձև, որն իր կառուցվածքում կներառի համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների, այդ թվում՝ համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի ու խոտհարքներ կառավարման ծրագրային բաղադրիչները: Մեթոդական ցուցումը առաջարկվում է տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի ղեկավարումն:
13. Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել <<Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա պարտադիր գույքագրման>> փաստաթղթի օրինակելի ձևը (նախատեսելով փաստաթղթում առանձին բաժին՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների, ինչպես նաև դրանց ենթակառուցվածքների գույքագրման համար) և որպես մեթոդական ցուցում տրամադրել Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի ղեկավարումն:
14. Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, արոտագտագործման և արոտների կառավարման նպատակներով, պիլոտային կարգով նախապես ընտրված մի քանի համայնքների միջև նախաձեռնել միջհամայնքային միավորում ստեղծելու գործընթաց: Միջհամայնքային նման միավորում ստեղծելով հնարավորություն կընձեռվի ոչ միայն միասնական ուժերով արոտների կայուն կառավարում իրականացնել, այլև նախադեպ ստեղծել՝ <<Միջհամայնքային միավորումների

մասին>> ՀՀ օրենքի հիման վրա Հայաստանում առաջին միջհամայնքային միավորման ձևավորման համար:

15. Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել մեթոդական ցուցումներ՝ ուղեցույցի տեսքով, որով կսահմանվի համայնքի ղեկավարի կողմից արոտների և խոտհարքների օգտագործող կամ տնօրինող հանդիսացող սուբյեկտների մասով ՀՀ հողային օրենսդրության խախտումները հայտնաբերելու եղանակները, գործիքակազմերը և մեթոդները, ինչպես նաև դրանց հայտնաբերման արդյունքում վարչական տույժեր կիրառելու մեխանիզմները և ընթացակարգը:

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հիմք ընդունելով սույն փաստաթղթի կազմման շրջանակներում կատարված օրենսդրական և իրավակիրառական ուսումնասիրությունները, կատարված վերլուծություններն ու եզրահանգումները, ստորև ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում արոտների կառավարմանն առնչվող ինստիտուցիոնալ կարգավորումների ամփոփ նկարագիրը.

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
1.	ՀՀ հողային օրենսգրքի կարգավորման համատեքստում՝ արոտների կառավարման հետ կապված հարաբերությունները համարվում են հողային իրավահարաբերություններ:	Արոտների կայուն կառավարման հիմնական գործիքներից մեկը հանդիսանում է հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագիրը, որն ի թիվս համայնքային սեփականություն հանդիսացող այլ հողերի, կալանավորի արոտների և	<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի կարգավորումների շրջանակում, համայնքի ղեկավարը՝ առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին: Համայնքի կողմից պետական և	<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի կարգավորումներ ի համատեքստում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների գույքագրման, պլանավորման, օտարման և օգտագործման տրամադրման գործընթացներում	<u>Համայնքի ավագանի</u> վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից օրենքով սահմանված իրականացման նկատմամբ, այդ թվում՝ արոտների կառավարման բնագավառում սահմանված լիազորությունների իրականացման նկատմամբ:	Հայաստանի Հանրապետությունում առկա չէ մեկ միասնական օրենսդրական ակտ, որով համայնքի կարգով սահմանվեն արոտավայրերի և խոտհարքների կառավարման հետ կապված իրավահարաբերությունները: Արոտների կառավարման հետ կապված հիմնական լիազորությունները վերապահված են համայնքների ՏԻՄ-երին, մինչդեռ՝ <<Տեղական	Մշակել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ: •անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող 50-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով. <<3) մինչև արոտավայրերի օգտագործումը, մշակում և համայնքի ավագանու

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
		խոտհարքներ ի օգտագործում ն, բարելավում ու կայուն կառավարումը : Այս ծրագրում բացի համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքներ ից, կարող են ներառվել նաև համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները:	համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրը կամ խոտհարքը օտարելիս՝ ընդունվում է ավագանու որոշում, որով համապատասխան հողամասը դրվում է հրապարակային սակարկությունների ձևով՝ աճուրդով օտարման: Նույն կարգով իրականացվում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների վարձակալության տրամադրումը, նախապես հայտարարված մրցույթի միջոցով:	մ ընդունվող որոշումների մասով, համայնքի ղեկավարը պետք է ապահովի բնակչության մասնակցությունը :		ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով դրանց առնչությամբ որևէ կարգավորում սահմանված չէ: Արոտավայրերի օգտագործման պլանը մշակելու լիազորությունը համայնքի ղեկավարին վերապահված է կառավարության որոշմամբ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի և 182-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Օրենքով՝ արոտօգտագործման պայմանագրեր կնքելու լիազորություն համայնքի ղեկավարի համար սահմանված չէ:	հաստատմանն է ներկայացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը>>: •ավագանու լիազորությունները սահմանող 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.3-րդ կետով.<<41.3) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանը>>: •Հիմք ընդունելով ՀՀ

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
							Սահմանադրության 6-րդ և 182-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.«օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է արտօգտագործման և խոտհարքների վարձակալության պայմանագրեր»։Պայմանագրերի մասով նկարագրել այն դեպքերը, երբ արոտավայրը կամ խոտհարքը օգտագործման է տրամադրվում միանգամից մեկից ավելի սուբյեկտների։ Միաժամանակ, ՏԻՄ

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
							օրենքի նախագծով բնակավայրի վարչական ղեկավարի մասով սահմանել լիազորություն, որով վարչական ղեկավարը մասնակցում է արոտավայրերի և խոտհարքների օգտագործման (կառավարման) պլանի մշակման աշխատանքներին և իրավասու է նախաձեռնել դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթաց: Բացի այդ, վարչական ղեկավարի մասով սահմանել լիազորություն, որով վերջինս մասնակցում է արածեցման կարգի մշակման աշխատանքներին:
2.	ՀՀ հողային օրենսգրքի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարումը վերապահված է համայնքների	<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի կարգավորում	Համայնքի ավագանու որոշման հիման վրա օտարված կամ օգտագործման տրամադրված արոտավայրի կամ	Համայնքի բնակչության մասնակցությունը արոտավայրերի և խոտհարքների կառավարման	<u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</u> ՏԿԵՆ-ը համարվում է ՏԻՄ-երի լիազորությունների	Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի	Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ և 182-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, լրացում կատարել ՀՀ հողային օրենսգրքում,

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
	տեղական ինքնակառավարման մարմիններին:	ների համատեքստում, համայնքի ղեկավարի կողմից պարտադիր գույքագրման են ենթակա նաև համայնքային սեփականություն համարվող արոտավայրերն ու խոտհարքները, դրանց ենթակառուցվածքները, այդ թվում՝ համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերն ու խոտհարքները:	խոտհարքի մասով՝ համայնքի ղեկավարը կնքում է համապատասխան պայմանագիրը:	գործընթացներին իրականացվում է հանրային քննարկումների և հանրային լուծումների միջոցով:	իրականացման նկատմամբ բարձրագույն իրավական հսկողություն իրականացնող լիազոր մարմինը: ՏԿԵՆ-ը իրավական հսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու սեփական լիազորությունների, այդ թվում՝ արոտների կառավարմանը վերաբերող լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումների նկատմամբ: Իրավական հսկողությունը սահմանափակվում է բացառապես ընդունված որոշումների օրինականությունը ստուգելով: ՏԿԵՆ-ը իրավական հսկողություն է իրականացնում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման	N 389-Ն որոշմամբ, որի ընդունման հիմքում բացակայում է ՀՀ հողային օրենսգրքի՝ համապատասխան կարգը սահմանելու վերաբերյալ իրավակարգավորումը : Մինչ օրս իրավական բաց է եղել հողային օրենսգրքում նման կարգավորում չնախատեսելը, ինչպես նաև գործող իրողություն են կառավարության որոշմամբ համայնքի ղեկավարի կամ ավագանու համար գործառույթների սահմանման անթույլատրելիության սահմանադրական պահանջները: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը չի սահմանում կարգավորումներ համայնքի ղեկավարի և	մասնավորապես՝ 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ պարբերությամբ.<<Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանում է համայնքի ավագանին:>>: Մշակել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ. •Հողօգտագործման բնագավառում համայնքի ղեկավարի լիազորությունները սահմանող 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
			ծրագիրը:		գործունեության նկատմամբ: Տեսչական մարմնի ղեկավարն օրենքով սահմանված դեպքերում ու կարգով, համայնքի ղեկավարին և համայնքի աշխատակազմի պաշտոնատար անձանց կարող է տալ պարտադիր կատարման ցուցումներ, նշանակել վարչական տույժեր, ինչպես նաև հաղորդումներ ներկայացնել իրավասու մարմիններ՝ հողային օրենսդրության պահանջները խախտողներին օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:	համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգ: Առկա իրավիճակում համայնքների աշխատակազմերի զգալի մասը և ավագանին չունեն այն կարողությունները, որպեսզի մշակեն այդ որոշմամբ սահմանված կարգը, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում լիազոր պետական կառավարման մարմնի կողմից այդ որոշման օրինակելի ձևը մշակել և տրամադրել համայնքներին: Համայնքների ավագանիների կողմից այդ որոշումների ընդունումը՝ գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում կփոխարինի կառավարության կողմից սահմանած	համապատասխան որոշմամբ, ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետությունում արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշումը: " ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակել համայնքի ավագանու . <<Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին>> որոշման նախագծի օրինակելի ձև: Ավագանու որոշման նախագծի օրինակելի ձևով

NN	Արտոների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արտոների կառավարման պլանավորումը	Արտոների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արտոների կառավարման գործընթացների ն	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արտոների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արտոների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
						կարգին:	սահմանել՝ պետական և համայնքային սեփականության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման հետ կապված ընթացակարգային կարգավորումները, համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները, ժամկետները, ընդունվելիք որոշումների տեսակները և շրջանակը: Առաջարկվում է, այն որպես մեթոդական ցուցում, ՏԿԵ նախարարի հանձնարարականով՝ համապատասխան ժամկետի սահմանմամբ, տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ի ղեկավարումն:
4.	ՀՀ հողային օրենսգրքի կարգավորումների համատեքստում, արոտավայրերը և խոտհարքները, որպես հողատեսքեր, մաս են կազմում գյուղատնտեսական նշանակության	Արոտավայրերի կայուն օգտագործման	<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի	Արոտավայրի կամ խոտհարքի օտարման կամ օգտագործման	<u>ՀՀ կառավարությանը ենթակա քննապահությանը և քնդերքի տեսական</u>	Կառավարության որոշմամբ սահմանված արոտավայրերի և խոտհարքների	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
	և անտառային հողերի:	(կառավարման) պլանի կազմման, արոտաշրջան առության սխեմայի մշակման մեթոդական ցուցումները և արոտավայրերից ու խոտհարքներից օգտվելու պայմանագրի օրինակելի ձևերը սահմանված են «Արոտավայրերի ու խոտհարքերի կայուն կառավարման պլանների կազմման և իրականացման» ուղեցույցում:	կարգավորումների համատեքստում, համայնքի ղեկավարը համապատասխան որոշմամբ՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, այդ թվում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները, դրանց ենթակառուցվածքները, ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:	տրամադրման հարցը ավագանու նիստի օրակարգում ներառված լինելու դեպքում՝ ավագանու նիստին մասնակցելու միջոցով:	<i>մարմին</i> Արոտավայրերի և խոտհարքների մասով գործում են բնապահպանական վերահսկողության օրենսդրական մեխանիզմները, սակայն դրանք վերաբերելի են անտառային ֆոնդի տարածքներում գտնվող արոտավայրերին և խոտհարքներին: Այդ վերահսկողությունը իրականացվում է տեսչական մարմնի և դրա տարածքային ստորաբաժանումների միջոցով, որոնց կողմից իրականացվող վերահսկողության նպատակն է ստուգել և վերահսկել բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը: Վերահսկողության արդյունքներով պայմանավորված՝ իրավախախտ	վարձակալության պայմանագրերի ձևերը մշակված են պետության անունից (պետական կառավարման մարմնի կողմից) պայմանագիր կնքելու դեպքերի համար, մինչդեռ օրենսդրությամբ այդ պայմանագրերը կնքելու բացառիկ իրավասությունը վերապահված է համայնքների ՏԻՄ-երին:	մշակել արոտօգտագործման և խոտհարքների վարձակալության պայմանագրերի օրինակելի ձևերը և մեթոդական ցուցման տեսքով տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ի ղեկավարում:

NN	Արտոնների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արտոնների կառավարման պլանավորումը	Արտոնների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արտոնների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արտոնների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արտոնների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
					սուբյեկտների նկատմամբ կարող են նշանակվել վարչական տույժեր, ինչպես նաև հաղորդումներ ներկայացվել համապատասխան իրավասու մարմիններին:		
5.	Բնական կերհանդակները, ինչպես և գյուղատնտեսական մյուս հողատեսքերը, ենթակա են հատուկ պահպանության, ինչը իրավաբանական տեսանկյունից համարվում է օրենսդրական երաշխիք կամ սկզբունք, որն իր արտահայտումն է գտել ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում:		Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրը կամ խոտհարքը օտարելու դեպքերում, համայնքի ղեկավարը համապատասխան որոշմամբ պետք է փոփոխություն կատարի պարտադիր գույքագրման փաստաթղթում և այն ներկայացնի ավագանու հաստատմանը:	Համայնքի պաշտոնական կայքում համապատասխան որոշման նախագծին ծանոթանալու և դրա վերաբերյալ գրավոր կամ օնլայն կարգով առաջարկություններ և առարկություններ ներկայացնելու միջոցով և այլն:	<u>Մարզպետը (մարզպետարանը)</u> Մարզպետը վերահսկողություն է իրականացնում՝ ➤ հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ. ➤ համայնքների հողերի օգտագործման սխեմաների, գլխավոր հատակագծերի իրականացման նկատմամբ. ➤ պետական և	Արտավայրերի կառավարման պլանները ընդգրկված չեն համայնքային սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերում՝ այդ որոշման օրինակելի ձևի բացակայությամբ պայմանավորված: Ինչը արտոնների կառավարման բաղադրիչը դուրս է թողնում համայնքի հիմնական պլանավորում ենթադրող փաստաթղթերից, այդ թվում նաև համայնքի հնգամյա զարգացման	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից որպես մեթոդական ցուցում մշակել <<Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը հաստատելու մասին>> ավագանու որոշման օրինակելի ձև, որն իր կառուցվածքում կներառի համայնքային սեփականություն հանդիսացող արտավայրերի և խոտհարքների, այդ թվում՝ համայնքի կառավարմանը հանձնված պետական

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
					համայնքային սեփականության արոտավայրերի և խոտհարքների տրամադրման, հետ վերցնելու, հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման, հողերի պահպանության միջոցառումների նկատմամբ. ➤ մարզի վարչական տարածքում գտնվող հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Մարզպետը՝ ⇒ պետական կամ	ծրագրից:	սեփականություն հանդիսացող արոտավայրերի ու խոտհարքների կառավարման ծրագրային բաղադրիչները: Մեթոդական ցուցումը տրամադրել համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի ղեկավարում:

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
					հիսնապատիկի չափով՝ 50.000 ՀՀ դրամ: ⇒ արոտավայրը կամ խոտհարքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը համայնքի ղեկավարի կողմից չկանխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում համայնքի ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրի հիսնապատիկի չափով՝ 150 000 ՀՀ դրամ:		

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
6.	Խոտհարքների և արոտավայրերի օգտագործման կարգը որոշում են հողամասերի սեփականատերերը, օգտագործողները՝ հողերի բնական գյուղատնտեսական շրջանացման, հողերի օգտագործման սխեմաներին և հողաշինարարական այլ փաստաթղթերին ու նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:		ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 389-Ն որոշման <<Ընդհանուր դրույթներ>> բաժնի 3-րդ կետի կարգավորումների համաձայն, համայնքի ղեկավարը մինչև արոտավայրերի օգտագործումը, կազմում է արոտավայրերի օգտագործման պլան՝ հաշվի առնելով արածեցվող կենդանիների թվաքանակը և արոտավայրերի բերքատվությունը: Այդ պլանը հաստատվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:	Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի նախագծի (որի բաղկացուցիչ մասն են կազմում համայնքի հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը, այդ թվում արոտավայրերը և խոտհարքները) մշակման ընթացքում, օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարը պարտադիր կազմակերպում է հանրային քննարկումներ և լուսններ:	Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում - հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ. - արոտավայրերը և խոտհարքները ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ. - արոտավայրերի և խոտհարքների սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ. - հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.	Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պարտադիր գույքագրման փաստաթղթերում ներառված չեն համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները, դրանց ենթակառուցվածքները՝ այդ որոշման օրինակելի ձևի բացակայությամբ պայմանավորված:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակել <<Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա պարտադիր գույքագրման>> փաստաթղթի օրինակելի ձևը (նախատեսելով փաստաթղթում առանձին բաժին՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների, դրանց ենթակառուցվածքների գույքագրման համար) և որպես մեթոդական ցուցում տրամադրել Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի ղեկավարումն:

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացների ն	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
					հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ: Թվարկված բոլոր լիազորությունները կիրառելի են արոտավայրերի և խոտհարքների սեփականատերեր համարվող՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար: Համայնքի ղեկավարը ֆիզիկական և իրավաբանական անձանց շրջանում, կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի արոտօգտագործումը համայնքի վարչական սահմաններում: Համայնքի ղեկավարի կողմից՝ ֆիզիկական և		

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
					իրավաբանական անձանց շրջանում պատասխանատվության տեսակներն են՝ "Քաղաքացիների կողմից արոտավայրը կամ խոտհարքը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու դեպքում, համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների նկատմամբ նշանակվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100 000 ՀՀ դրամի չափով: "Արոտավայրի կամ խոտհարքի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50 000 ՀՀ դրամ:		

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
					“Արոտավայրի կամ խոտհարքի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ 30.000 ՀՀ դրամ: “Արոտավայրի կամ խոտհարքի բերրիության և այլ օգտակար հատկությունների պահպանության և վերականգնման սահմանված կարգը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 ՀՀ դրամ:		
7.	Պետության և համայնքների սեփականության հողամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, բացառությամբ գյուղատնտեսական		Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնական	Համայնքի հողերի, այդ թվում համայնքի կառավարմանը		Արոտօգտագործման համար ենթաօրենսդրական ակտով սահմանված	Փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
							ապահովման սկզբունքը, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. <<3. Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների կառավարման, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառում օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար բազմաբնակավայր համայնքի աշխատակազմում ստեղծվում է ագրոնոմ (գյուղատնտես) մասնագետի հաստիք:>>:
9.	Արոտավայրերի և խոտհարքների օգտագործման իրավունքով տրամադրումը իրականացվում է խոտհնձի և անասունների արածեցման նպատակներով: Անտառային		Համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերի կամ	Համայնքի սեփականություն հանդիսացող, ինչպես նաև		Արոտօգտագործման և արոտների կառավարման հետ կապված	Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
	Ֆոնդից, խոտհնձի և անասունների արածեցման համար, տրամադրված հողամասերի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների վարձակալության պայմանագրեից բխող օգտագործման իրավունքը ենթակա է պետական գրանցման, բացառությամբ՝ ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> N 1477-Ն որոշմամբ սահմանված պարզեցված կարգով կնքված պայմանագրերի:		խոտհարքների փոխանակման դեպքում՝ համայնքի ղեկավարը ընդունում է որոշում, որը վավերացնում է համայնքի ավագանին՝ համայնքի հողաշինարարական և քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: Այս հնարավորությունը չի տարածվում պետական սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների վրա, այն իրականացվում է կառավարության սահմանած կարգով՝ լիազոր մարմնի որոշմամբ:	համայնքի կառավարմանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող հողերը, դրանց ենթակառուցվածքները, համայնքի ղեկավարը ենթարկում է պարտադիր գույքագրման և այն տեղադրում է համայնքի պաշտոնական կայք էջում: Ինչպես և տեղական ինքնակառավարմանը վերաբերող բոլոր հարցերի դեպքում, այնպես էլ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերի և խոտհարքների օտարման կամ		հարաբերությունները կարող են դիտարկվել նաև միջհամայնքային համագործակցության համատեքստում՝ արոտօգտագործողներ ի կոոպերատիվների նախադեպով: Գործող <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը և <<Միջհամայնքային միավորումների մասին>> ՀՀ օրենքը որևէ կերպ չեն սահմանափակում արոտօգտագործման և արոտների կառավարման նպատակներից ելնելով միջհամայնքային համագործակցություն ձևավորելուն: Սակայն արձանագրումն այնն է, որ իրավակիրառական պրակտիկայում դեռևս նման գործընթացներ նախաձեռնված չեն:	նախարարությանը, արոտօգտագործման և արոտների կառավարման նպատակներով, պիլոտային կարգով նախապես ընտրված մի քանի համայնքների միջև նախաձեռնել միջհամայնքային միավորում ստեղծելու գործընթաց: Միջհամայնքային նման միավորում ստեղծելով հնարավորություն կընձեռվի ոչ միայն միասնական ուժերով արոտների կայուն կառավարում իրականացնել, այլև նախադեպ ստեղծել՝ <<Միջհամայնքային միավորումների մասին>> ՀՀ օրենքի հիման վրա Հայաստանում առաջին միջհամայնքային միավորման ձևավորման համար:

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
				օգտագործման տրամադրման որոշումների նախագծերը տեղադրվում են համայնքի պաշտոնական կայք էջում, որպես իրազեկում: Արոտավայրերի և խոտհարքների մասով հայտարարված աճուրդները և մրցույթները համայնքի ղեկավարի կողմից տեղադրվում են www.azdarar.am կայքում, ինչպես նաև համայնքի պաշտոնական կայքում:			
10.	ՀՀ հողային օրենսգիրքը պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության համար վարձավճարի նվազագույն չափը սահմանել է տվյալ					Բազմաբնակավայր համայնքի աշխատակազմում ագրոնոմ-գյուղատնտես մասնագետի հաստիքի	Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել

NN	Արոտների կառավարմանը վերաբերող գործող օրենսդրական կարգավորումները	Արոտների կառավարման պլանավորումը	Արոտների կառավարման հետ կապված իրավահարաբերություններում ՏԻՄ-երի որոշումների շրջանակը	Բնակչության մասնակցությունը արոտների կառավարման գործընթացներին	Վերահսկողությունը և դրանից բխող պատասխանատվության շրջանակները	Արոտների կառավարման հետ կապված առկա օրենսդրական և իրավակիրառական խնդիրները	Արոտների կառավարման հետ կապված օրենսդրական և իրավակիրառական առաջարկությունները
	հողամասի հողի հարկի դրույքաչափից ոչ պակաս, իսկ գործադիրը՝ համապատասխան որոշմամբ սահմանել է, որ արոտավայրի կամ խոտհարքի վարձակալության վճարը պետք է սահմանվի այդ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:					ստեղծման պարագայում, բաց է մնալու այդ պաշտոնից բխող գործառույթների սահմանումը:	բազմաբնակավայր համայնքի աշխատակազմի ազդրոնոմ (գյուղատնտես) մասնագետի, որպես համայնքային ծառայողի հաստիքի՝ պաշտոնի անձնագիր և տրամադրել համապատասխան համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ի ղեկավարումն:
11.	ՀՀ ՎԻՎ օրենսգիրքը արոտագտագործող համարվող կամ արոտավայրերի և խոտհարքների սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց մասով սահմանել է ՀՀ հողային օրենսդրության կանոնների խախտման դեպքերում համապատասխան համայնքի ղեկավարի կողմից վարչական տույժի ենթարկվելու վերաբերյալ կարգավորումներ:	ՀՀ ՎԻՎ օրենսգրքից բխող վարչական տույժեր կիրառելու և դրանք պլանավորելու վերաբերյալ կարգավորում ներդրող համայնքային ակադրակում ընդունվող ենթաօրենսդրական ակտերում չեն	Արոտագտագործող համարվող կամ արոտավայրերի և խոտհարքների սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների խախտման հիմքով վարչական տույժերը նշանակվում են համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ:	Համայնքի ղեկավարը վարչական տույժեր կիրառելիս առաջնորդվում է <<Վարչարարության հիմունքներ ի և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի պահանջներով և	Արոտագտագործող համարվող կամ արոտավայրերի և խոտհարքների սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ՀՀ հողային օրենսդրության պահանջների խախտման հիմքով կիրառվող վարչական տույժերը վերահսկողության արդյունք են և դրանցից ենթադրվող ֆինանսական հոսքերը ուղղվում են համայնքի քյուցե:	Հարկ է նկատել, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքով համայնքի ղեկավարին վերապահված պատասխանատվության են ենթարկվելու վերաբերյալ լիազորությունները չեն մանրամասնում դրանց կիրառման կառուցակարգերը: Արոտագտագործող կամ տնօրինող սուբյեկտի նկատմամբ վարչական տույժ կիրառելուց առաջ, նախ անհրաժեշտ է	Առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, մշակել մեթոդական ցուցումներ՝ ուղեցույցի տեսքով, որով կսահմանվի համայնքի ղեկավարի կողմից արոտների և խոտհարքների օգտագործող կամ տնօրինող հանդիսացող սուբյեկտների մասով ՀՀ հողային օրենսդրության խախտումները հայտնաբերելու



ENVIRONMENT, CLIMATE, OPPORTUNITIES
for people and nature

Բնական պաշարների կառավարում և Էկոհամակարգային ծառայությունների պահպանություն Հարավային
Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար (ECOserve)

Հանրապետության 59, 9-րդ հարկ 0010 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0)10 51 00 65
Էլ հասցե՝ ECOserve@giz.de
Կայք՝ www.giz.de; www.biodivers-southcaucasus.org

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ)